



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2799

Մտ Աղ-բ Այս Ա. Ս.

Զմուտի Ա հանգստի
հանգստի հանգստի հանգստի.

Начальная РУССК. КРЕСТОМ.

491.71-87

У-25

1907.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԳՈՒՏՏԵՆՔԵՐԳԻ»



Начальная
РУССКАЯ
ХРЕСТОМАТІЯ

ՎԵՐԱԾԻՆ ՀՅՅԱՍՏԱՆԻՆ
անգրաբիկ և կր
ՏՆԳՐԱՆ ՆԱԳՐԵԾՐԵՆԵՆՑ
18 ՆՈՅՄ. 1918 Ք. ԹԻՖԼԻՍ.

для

АРМЯНЪ

1-ая книжка



ԴԱՍԱԽԱՆԴՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

491.71-8
5-25

ԱՅԻԱՏԱՍԻՐԵՑ

ՍԵՂՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆ

Թ Ի Փ Լ Ի Ս

ԱՐԱԳԱՏԻՊ ՓՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՊՈԼԻԳՅՍՍԿԱՅԱ, 7.

1907

(5)

18 NOV 2011
ELOS . 80

1917-8
U-25 ver

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳԻ“

491.71-8

M-23

Начальная

РУССКАЯ ХРЕСТОМАТИЯ

ДЛЯ АРМЯНЪ

Составилъ СЕДРАКЪ МАНДИНЯНЪ

1-ая книжка

ՀԵՐԱՍԻՆ ՀՅՅԱՍՏԱՆԻՆ
անդրաճիկ ներ
ՏՈԳՐԱՆ ՆԱԶԱՐԵՆՆԻԾ
ԹԻՖԼԻՍ 1918 թ. ԹԻՖԼԻՍ.

ՈՒՒՍԵՐԷՆ ՀԱՏԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ

(Մասնակցությունները բացառություններով)

Կազմեց ՍԵՐՐԱՅ ՄԱՆԴԻՆԵԱՆ

Ա. ԳՐԵՈՅԿ

(Նոր ծրագրով ձխական ուսումնարանների 3-րդ բաժանմունքի համար)

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԱՆՅԻ ՊՈԼԻԹԵՏԿԱՆ. 7.
1906 (5)

Հ.Ս.Խ.Զ. ՀԱՅԻՐԱՅԻՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ
Բ. Ա. Պյոտրովայա Библиот. 7
7/ХІ-1922
Կոմիտասի անվան
ՄՅԱՆՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
(5)

2954-51

24.06.2013

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Հեռեկալ տողերն արդէն լոյս են տեսել «Նո-
վրի» 35 և 36 համարներում, որոնց կրկնութիւնը
այս անգ, դրեթէ նոյնութեամբ, աւելորդ չեմ հա-
մարում:

Այս անգ շոշափած սկզբունքները մի անգամ ար-
դէն հարեանցի հրապարակ էի հանել անցեալ տարի
«Մշակի» մէջ (№ № 19 և 20): Այժմ ոչ միայն ա-
ւելի մանրամասնօրէն խօսում եմ այն անգ արծարծած
խնդրի մասին, այլ և նոյն սկզբունքներով կազմած ուս-
սերէն հասարակարհի հաստատումներ եմ քննադատում մեր բանի-
մայնների դատաստանին, որոնք կը տեսնեն, որ այն
տարբերվում է սովորական դասագրքերից, շատ կող-
մերով:

Իմ հիմնական սկզբունքն է, որ մի այդպիսի
դասագիրք պէտք է ձգտէ ոչ միայն ուսուսերէն լեզուի
դասատուութիւնը բարձրացնել, այլ և հայերէնը
սպասնօրէն գերծ պահել օտարաբանութիւններից:
Ով որ ուշի ուշով հեռեկալ է մեր ուսումնարանական
դարձերին, նորանից ծածուկ չէր մնայ այն իրողու-
թիւնը, թէ ուսաց լեզուի ուսուցումը մեզանում
մեծամեծ թերութիւններով է առաջ գնացել, և թէ
այն թերութիւնները ազդել են ոչ միայն նոյն
խիւ ուսաց լեզուի դիտութեան վերայ, այլ

և հակասազրորէն նախ և առաջ հէնց հայերէն ի հարազատութեան վերայ: Ստորև կը ականենք, որ մեր ուսումնարաններում ընդունած թարգմանութեան մահացու եղանակը այլ արդիւնք չէր էլ կարող ունենայ:

Բայց չիշատակած անյաշողութեան պատճառ է դառել նաև մի ուրիշ հանդամանք: Երբ մեր մէջ տարածվում և հռչակվում են ուսուցիչների այնպիսի դասադրքեր, որոնք միամտաբար կազմած են լինում անխառն վրացիների, թուրքերի և հայերի համար, այդ սպառնալից է, թէ մեր մեջ չեն հասկանում մայրենի և օտար լեզուի բուն և իսկական չարաբերութիւնը: Հայ մանուկի աշխարհահայեացքը թուրքի և վրացու աշխարհահայեացք չէ, սակայն ուրեմն հայ մանուկը ուսուցիչ լեզուի այնպիսի դասադրք պէտք է ունենայ, որ կազմուած լինի հայկական աշխարհահայեցողութեան համեմատ, ուրեմն միմիայն հայերի համար: այնպէս որ այդպիսի դասադրքեր երբէք չի կարող զործ ածուիլ վրացու կամ թուրքի ուսման արժանութիւնը: Զարմանալի է, որ այս մանկավարժական արտօման շատերի համար եօթը փականքով կողպած դասարան է:

Կան այնպիսի նշմարութիւններ, որ մեր մէջ դեռ ևս զիտակցական նշմարութիւն չեն դառել: Ամէնքն ասում են, թէ նախ մայրենի լեզու պէտք է մատակարարուի, ապա օտարը, թէ օտար լեզուի ուսումը մի երկու կամ երեք տարի աւելի չետոյ պէտք է աւանդուի, քան մայրենին. բայց ինչո՞ւ: Շատերի համար հէնց այս ինչու է մութ: Սակայն հեշտ է հասկանալ այնպիսի չաշողութեան անհրաժեշտութիւնը — տարրական ուսումնարանի դիսպոզ

իւնդիրն է հանրակրթութիւնը, միտք բաց անելը, յատուկ և ուրոյն աշխարհահայեացք կազմելը, իսկ այս բանի բնական միջնորդն է մայրենի լեզուն: Արդ, պէտք է ժամանակ տալ, մինչև որ կառուցանուի մանկան մաքի առաջին չարկը, որի վերայ չետոյ կը կանդնի երկրորդ չարկը, այն է օտար լեզուն: Այս ասածներից պարզ է և այն, որ հէնց սկզբից հայ մանուկի, վրացի մանուկի և թուրք մանուկի հիմնական աշխարհահայեցողութիւնները միատեսակ և միևնույն չեն լինի և չեն կարող լինել: Սակայն ուրեմն, ուսուցիչ լեզուի դասադրքը, իւրաքանչիւրի համար ևս, տարբեր կերպով պէտք է կազմուի, տարբեր կերպով նիւզաւորուի, որպէս զի այն իւրաքանչիւրի մայրենի լեզուի հիմքերով շարունակէ սխտուած հանրակրթութիւնը: Եւ անա մենք այդպիսի օրինակ ենք տալիս այս գրքով:

Այժմ հասկանալի է, թէ ուսուցիչն միայնպիսի դասադրք, որ նպնում է հաւասար չափով բաւարարութիւն տալ և՛ հայ, և՛ վրացի, և՛ թուրք մանուկի բացուած մաքին — մանկավարժական արտուրդ է: Այլ ընդհակառակ, այդ դասադրքերը պէտք է իրարից բացէիբաց տարբեր լինին իրանց ընտրած նիւթերի բովանդակութեամբ, ուրեմն հէնց ամբողջ բնագրով:

Ահա մի հայեացք, որ նոյն իսկ արուեստով մանկավարժների համար կարող է հերեախիտութիւն երևալ:—

Նախ քան այդպիսի դասադրքի յատկութիւնների մասին խօսելու, պէտք է մի կական հանդամանք շօշափենք, որ ոչ միայն դասադրքին է վերաբերում, այլ նաև նոյն իսկ լեզուի ուսուցման, մենք ի նկատի

ունենք թարգմանելու եղանակը, որ վերը ակնարկեցինք և որ ամենամեծ անհեթեթութիւնների և վրշտերի պատճառ է դառնում մեր ուսումնարաններում:

„Мама я ПИТЬ ХОЧУ“,—ինչպէս են թարգմանում մեր դասադրքերն ու պարոն ուսուցիչները: Թարգմանում են կարգով: նախ—мама, ապա—Я, չեառ պИТЬ և վերջ:պէս—ХОЧУ, որով ստանում են այսպիսի հիանալի խժողով հայերէն—(«մայրիկ, ես խմել կամենում եմ»): մինչդեռ իսկական թարգմանութիւնն է «մայրիկ, ջուր եմ ուզում» (կամ պարզաբար «մայրիկ, ծարաւ եմ»), այիսինքն (եւ) դերանունը կորաւ, խմել դառաւ ջուր, կամենում եմ դառաւ ուզում եմ:

Այս օրինակով կարճ ուղեցանք հասկացնել, թէ լեզուի դասերից պէտք է արմատով վերցնել բառական, նիւթական թարգմանութիւնը, և տեղը դնել իմաստի, կատարեալ զօրութեամբ, այն ևս հայացի թարգմանութիւնը, որով դասարանում միշտ կը լսուի մի կողմից՝ ուսուց կրտսիկների լեզուն, միւս կողմից՝ հայերէն մաքուր գրականական լեզուն: Թող մեր դասադրքը վկայէ, արդեօք հնարաւոր է մի այլպիսի բարեփոխութիւն: Եւ դա այնքան բարեբութիւն կը լինի, որ արժէ, եթէ մեր պարոն ուսուցիչները փոքր ինչ զօհողութիւն չանձն առնեն և հրաժարուին այն մահացու զազախարից, իբրև թէ առանց բառական թարգմանութեան՝ լեզուի դասը համ չի ունենայ: Պէտք է մի անգամ ընդ միշտ համոզուիլ, թէ բառերի ատղաւակ թարգմանութեան դէմ՝ կայ աւելի բեղմնաւոր և ողի ներշնչող եղանակ դասաւանդութեան:—

Այժմ դառնանք մեր դասադրքի յատկութիւններին.

1) Ռուսերէն լեզուի ընթերցարանը իրօք պէտք է լինի դասադրք այդ լեզուի, և ոչ թէ ծանօթութիւններ մատակարարող ձեռնարկ: Ծանօթութիւններ աւանդելու համար արդէն յատկացրած կան ուրիշ գասեր, այն է աշխարհագրութեան, բնագիտութեան և այլ գասեր: Եթէ ընթերցարանի մէջ շարուած լինին առն, փողոց, քաղաք, գիւղ, դաշտ, բլուր և այլ վերնադիրներով կցկցած և շինովի յօդուածներ, այն աեղ բուն լեզուն հարկաւերկրորդական դիրք պէտք է ստանայ, որովհետև հատուածները կը լինին ոչ թէ դասական բնաիր հեղինակների ստեղծագործութիւններից յօրինած արդիւնքներ, այլ շարչի յօդուածադիրների մկրատով ձեւացած և նոցա խելքով արապրած չնչին կարկատանքներ: Դասական հեղինակները դեղարուեստ գրականութիւն են ծաղկեցնում, իսկ ըէպլ ծանօթութեանց գրականութիւնը մեծ մասով անպանօյն, հասարակ, մինչև անգամ չոր ու ցամաք լեզուով է ձեւանում: Թէ չարչի խմբագրողները, ընթերցարան թխողները, նոյն իսկ բնաիր հեղինակներից քաղած կտորները ո՛րպիսի բուն ա գ բ ո ս ու թ ե ա մ բ կոխում են զանազան իմաստակ վերնագիրների տակ, արդէն հանրաժանօթ իրողութիւն է: Մեր գրականութիւնից օրինակ առնելով, ենթադրենք, թէ Դոդոխեանի «Ծիծեռնակը» զետեղուել է «Գիւղ» վերնագրի բաժնի մէջ, միայն այն պատճառով, որ մէջը չիշտակվում է Ս. շ ա ա բ ա կ գ ի լ գ ի անունը: Սակայն հեղինակը, փոքր ինչ այլ շարժառիթներից զրդուած, կարող էր իւր արնաստեղծութեան մէջ Ս. շ ա ա բ ա կ

անուան փոխարէն՝ հաշտարխան անուն զործ զնէր: Այն դէպքում նոյն ոտանաւորը, պատահական կերպով, պէտք է զեաւորուէր («Քաղաք») բաժնի մէջ: Բայց մի թէ հեղինակը, այդ ոտանաւորը ստեղծելիս, քաղաքի կամ գիւղի զաղափարով է առաջնորդուել, և ոչ թէ օտարութեան մէջ հայրենեաց կարօտը քաշողի տանջանքով: Օրինակը պարզ ցոյց է տալիս, որ այդպէս դասադիրք կազմողները հարկաւ պէտք է քաշքշեն նոյն իսկ լաւագոյն հատուածները, և զրահանութեան թափթփուկներէից օգտուին իրանց պէսպէս («բաժիններ») լցնելու համար, երբ որ շեղվում են դասադիրքի միակ բուն նպատակից:

Հեռակապէս, մեր դրքի մէջ զեաւորուել են դասական և ընտիր հեղինակներից հատուածներ, *) ամենեւին չկաշկանդուելով այս կամ այն բունագրօս վերնագիրներից: Պուշկին, Լերմոնտով, Ժուկովսկի, Կուրով, Գոգոլ, Տուրգենև—ահա դասադիրքի լեզուն, տիրողաբար. իսկ Եթէ հայերէնից ուսուերէն թարգմանութիւններ ևս մէջը կցելու կարիք զգացուի, որ անբար բան չէ, այն դէպքում ևս կը զիմենք լաւագոյն թարգմանիչներին, և ոչ թէ միշակ զրիչներին (զոր օր. Գոգոլսեանց—Юрій Веселовскій):

Պարզ է, որ այս բոլոր նկատողութիւններով մենք ծարառում ենք մեր ուսումնարանների մեծագոյն պա-

*) Եթէ փոքրահասակների համար նշանակած, այս գիրքը մենք կոչել ենք „Хрестоматія“, այս էլ արել ենք զիտմամբ: Գրքի մէջ զետեղուած են արդարև ամբողջացած հատուածներ, այն ևս ընտիր հեղինակների հատուածներ, և ոչ թէ շինովի և ջրալի յօդուածներ պատկանների համար: Մեր մշտական ձգտումը այն է եղել, որ ուսումը լինի զուարթ, բայց լուրջ:

կատութեան զէծ. այն տեղ ոչ ուսուերէնը ուսուերէն է, և ոչ հայերէնը՝ հայերէն: Երկուսն էլ տղեղ են:—

2). Մեր անխախտ սկզբունքն է, թէ մայրենի լեզուն պէտք է լինի հիմք, իսկ ուսուերէնը նորա վերայ հաստատուած շէնք: Արդ, արդեօք այս ասութիւնը մի գաստարկ խօսք չէ՞, արդեօք իրագործելու բան է: Մեր դրքի բուն նորութիւնն էլ հէնց այդ է. ամենամայրագոյն կերպով պահպանում ենք մանկավարժական այդ և քէն— ծանօթից անծանօթին պատուէրը: Ինչ որ նախ մայրենի լեզուով ենք աւանդում և այդպէս մանուկի աշխարհահալեացքը մշակում ենք, այն էլ ապա անմիշտպէս մատուցանում ենք օտար լեզուով: Արդէն Ռուսօսն ասել էր, թէ օտար լեզու աւանդելու համար լաւագոյն դասադիրքն է Աւետարանը, որպէս բոխանդակութեամբ աւելի մատչելի՝ մանկական մտքին: Մենք այդ զաղափարը փոքր ինչ ուրիշ կերպ զործ զրեցինք. Աւետարանի փոխարէն ընտրեցինք երկու զրահանութիւնների ստեղծագործութիւնները: Յոյս ունինք, չենք սխալուել, եթէ Կոլումբոսի հաւկիթի պրօբլէմը այդպէս ենք լուծել: Սակայն այն ժամանակ դասատուութեան եղանակն էլ ծայրէիծայր տարբեր պէտք է դառնայ, քան մեր սովորականն է, ինչպէս որ հեռակապից կը տեսնենք:—

Բայց նախ և առաջ դարձեալ խօսենք նիւթի ընտրութեան ծախին, ինչպէս որ մենք ենք կատարել: Որպէս զի ուսուերէնը հայերէնի հետ կապէինք, կարն հանապարհն այն կը լինէր, որ ընտրէինք մեր հայերէն ընթերցարաններից մէկը (Տ. Ղևոնդեանի, Արաբաշեանի, Աղայեանի, Սարգսեանի կամ այլոց) և այն տեղի յօդուածների համեմատ զուգրնթացաբար

յարմարեցնելինք ուսուցիչն դասադրքի հաստատու-
ները: Տեղը չէ բացատրութիւն սալու, թէ ինչու
նոցանից մէկը կամ միւսը մեր նպատակին չյարմար-
ուեցաւ, մանաւանդ որ մենք ունեցինք մի ուրիշ էլք:
Մենք մեր ուսուցիչն գրքին կցուծ ենք այնպիսի հա-
ւերէն բաժին ևս, որ չիշատակած ամէն մի ընթեր-
ցարանի հետ կարող է գործ ածուիլ, որպէս հայերէն
դասերի լրացուցիչ մաս, բայց որ միւսնոյն ժամանակ
այն հիմքն է դառնում, որի վերայ ուսուցիչը պէտք
է հաստատուի: Այդ բաժնի մէջ մանուկ են կամ մեր
ընտիր հեղինակները և կամ ուսուցիչ ընտիր հեղինակ-
ների լաւագոյն հայերէն թարգմանութիւնները, յա-
մենայն դէպս—մի գեղեցիկ ծաղկաբաղ:

Այս զրբով մենք մի փորձ արեցինք ուսուցիչն
դասագիրքը հայերէնի հետ օրգանական կերպով
շաղկապել: Այդ օրինակը սալիս ենք մենք, որով-
հետև նախածեռնութեան ողին մեր մէջ շատ էլ զօ-
րացած չէ: Մեր անցեալ բոլոր գործունէութիւնը
այդպէս է եղել. մանկավարժական լաւագոյն
օրինակ ենք սուել և ասպարէզից հեռացել, որպէս
զի ուրիշները սուելի լաւ հոխացէն սկսած գոր-
ծը: Այդպէս ենք փարուել, երբ որ առաջին անգամ
հաշարած ընթերցարանի օրինակ ենք սուել («Ըն-
տանեկան»), («Իւրեղանական»), («Նահապետական») աշ-
խարհները). երբ որ առաջին անգամ կեանքը մօ-
տեցրել ենք դպրոցին («Կեանքի հանդամանքների հա-
մեմատ թուարանութիւնը»). երբ որ առաջին ան-
գամ բանաւոր, զրաւոր և ընթերցանութեան ճեր-
բարեան վարժութիւնները ցոյց ենք սուել նաև օ-
տար լեզուի համար («Материалы և այլն»). երբ որ
առաջին անգամ ցոյց ենք սուել կախողներին վար-

ժեցնելու, դպրոցական երաժշտութեան կանոնաւոր-
ման օրինակը («Աղբիւրի») մէջ և այլն: Այդպիսի օրի-
նակ ենք սալիս և այժմ առաջիկայ զրբով, այն մեծ յու-
սով, թէ մեր պաշտօնակիցները մեզ կօղնեն ուսու-
ցիչի (և ո՞վ դիտէ, թերևս և հայերէնի) դասա-
տուութեան մէջ մի բարերար լեզուափոխութիւն
ծղել:

3) Դասադրքի դրական յատկութիւնների վրայ
ասածը հերիք համարենք: Նիւի բացասականները
թուենք: Անկասկած մեր օրինած պէտքագոյները
այդպիսի դասադրքի մէջ իրանց սիրած յատկութիւն-
ները կը փնտուեն, որ մեր աեսակէտով մանկավար-
ժական նախապաշարումներ, մոլորութիւններ, սպա-
նիչ հնարաշառութիւններ են: Ամէնքը դասապար-
տում են Մարգարի պէս Փրանսերէնի դասագիրքը,
Եւտուշեակու պէս թուարանութեան խնդիրները
և այլն, բայց և այնպէս մի նոր դասադրքի մէջ դար-
ձեալ հետամուտ կը լինեն, որ այն աեղ զանեն
Եւտուշեակի-Մարգարական գոհարները: Մերոնք էլ,
չնայելով վերև սուած բացատրութիւններին, դար-
ձեալ օտար լեզուի դասադրքի պակասութիւն կը
համարեն, եթէ մէջը չզանեն սովորական վերջին
երեսի բառարանը, Փրագէօլօգիան և այլ
այսպիսի մանկավարժական ցնցոսիները: Այս մեր
դասադրքի մէջ զուր է փնտուել հին շախիզների
հետքերը, պէտք է ընտելանայ, որ նա սովորականից
զուրս բան է:—Սրբ չիշենք մեր հանրացած սխալները:
ա. Ռուսերէն լեզուի դասատուութեան զլխա-
ւոր սխալներից մէկը համարում ենք, ինչպէս արդէն
չիշատակուեցաւ, սովորական թարգմանութեան
եղանակը: Սխալ է մեր կ բառեր թարգմանելու

ազեղ սովորութիւնը. պէտք է մի անգամ ընդ միշտ, դասերի ժամանակ, լսելի դարձնել առաւելապէս խօսքի ամբողջութիւնը, իմաստի լրութիւնը, կապակցած նախադասութիւնն ու չերկրած պարբերութիւնը: Ասում ենք առաւելապէս, և և ոչ թէ միմիայն և եթ:

Սակայն հարկաւոր է փոքր ինչ աւելի բացատրութիւն տալ:

Դասերի ժամանակ մենք երկու զանազան դէպքերում կարիք են զգում թարգմանելու. նախ՝ երբ որ մայրենի լեզուով նախապատրաստութիւն ենք սալիս, օտար լեզուի հատուածն ըմբռնել սալու համար. երկրորդ՝ երբ որ արդէն ուսուցանասիրում ենք օտար լեզուի բնագիրը և ստուգութեան համար այն թարգմանում ենք մայրենի լեզուի: Առաջին դէպքն է, երբ որ մենք անցնում ենք ծանօթից անծանօթը, և այն տեղի րօք անհրաժեշտ է բառարանը. բայց այն էլ ինչպէս կազմուած:—Վերջնենք մեր նախկին ոչ-բանաստեղծական, հասարակ նախադասութիւնը—«մայրիկ, ծարաւ եմ» (мама, я ПИТЬ ХОЧУ), չիշեցնելով, որ մեր դիրքը սալիս է ոչ թէ այսպիսի մերկ նախադասութիւններ, այլ ամբողջացած հատուածներ: «Տղէքք, զուք փաղը ուսերէն կը կարդաք «մայրիկ, ծարաւ եմ» նախադասութիւնը. այժմ պէտք է սովորենք հարկաւոր բառերը»:

Պէտք է ուշադրութիւն դարձնել, որ «мама, я ПИТЬ ХОЧУ» նախադասութեան մէջ жаждать բառ չի պատահում, ուրեմն մենք էլ առանց հարկի «ծարաւ» բառը չենք թարգմանի, այլ աչքի առաջ կրնենանք միայն ուսերէն բնագրի պահանջները:

Ուրեմն զսար մօտաւորապէս այս կերպով առաջ կը տանենք. «Տղէքք, ծարաւոգը ի՞նչ է ուզում»—Չուր խմել է ուզում:—«Դուք էլ մտքում պահեցէք հետեւեալ բառերը.

մայրիկ—мама,

խմել—ПИТЬ,

ուզում եմ—ХОЧУ.

Դարձեալ չիշեցնում ենք, որ առանց հարկի ոչ «ծարաւն» ենք թարգմանում, և ոչ «չուրը»՝ բայց եթէ աշակերտները հետաքրքրուին, հարկաւոր բառերն էլ սիրով կը թարգմանենք:

Զթարգմանած մնաց դերանունը (Я), բայց փոյթ չէ:

Այսպիսի նախապատրաստութիւնից յետոյ, դալիս է բուն բնագրի ուսուցանասիրութիւնը կամ սկսում է բուն ուսերէնի դասը, և այն տեղ մանուկը այլ ևս բառեր չի սովորում, այլ «мама я ПИТЬ ХОЧУ» նախադասութիւնը ուղղակի ամբողջովին թարգմանում է հետեւեալ կերպով. «մայրիկ, ծարաւ եմ», «մայրիկ, չուր եմ ուզում»: Իսկ դերանունը (Я) թող մանուկի լսողութեան մէջ մնայ, որ ժամանակով անշուշտ լոյս կրնանի իւր կատարեալ գօրութեամբ: Ասպէս շատ անգամ կը պատահի, որ մենք մի առ ժամանակ մտքին մի բան պահ ենք սալիս, որպէս զի յետոյ, յարմար առթով, առկոտով ստանանք պահ ստուածը: Ուրեմն, այսուհետեւ մեր բառարանը կը լինի — ուսաց դրականական ոճի դէմ՝ հայոց դրականական ոճը ամբողջացած:

բ. Սխալ: Ապա մեղանից կը հարցնեն, թէ ինչո՞ւ դասադրում չկան սովորական Փրայները:

փոխընդփոխ մի լեզուից միւսի թարգմանելու համար: Այս հարցմունքի մէջ սքողուած է մի ծանր մանկա-
փարժական մոլորութիւն: Մարդիկ սօփորել են գրքի
գերի դառնալ և ուղում են դասերի ժամանակ միշտ
զիրք դործածել: Գրքի մէջ սպած Ֆրազները քարա-
ցած, մեռած խօսքեր են, այն ինչ մանուկը կարօտ է
կենդանի լեզուի: Կեանքի մէջ ամէն մի բոլորէն
այլ կարիք է ստեղծում, միշտ նոր հարցմունք է
դնում մարդու առաջ, իսկ գրքի Ֆրազը միշտ միա-
կերպ անշունչ է և բոլորէին անհամապատասխան:
Այս խօսքերից պարզ պէտք է լինի, թէ չարաակ
զիրք բանեղնելը, չարաակ բառարան բանալը, չարա-
ակ կարգալը կամ առհասարակ աեսողական զգալ-
արանքի դործածութիւնը—թիւր նանապարհ է:
Բնական նանապարհը լսողութիւնն է, կենդանի խօս-
քն է. այս միջոցով են սօփորում մանուկները իրանց
սանր մայրենի լեզուն, այսպէս նաև հասակաւորները՝
օտարութեան մէջ՝ օտար լեզուն: Ո՛չ մի պատճառ
չկայ, որ ուսումնարաններում շեղուենք այս ուղղու-
թիւնից: Այս էլ մի նոր պահանջ է, որ մեր զիրքը
հալ փարժապետի վերայ դնում է: Դասերի ժամա-
նակ փարժապետի ու աշակերտի կենդանի լեզուն
ու խօսակցութիւնը, թէ առանձնակի և թէ խմբով,
միշտ պէտք է իշխէ, այն ևս որչափ հնարաւոր է՝
միայն և միայն ուսուցիչն կենդանի լեզուն:

դ. Սխալ: Դարձեալ հիմնական սխալ է երկու
դժուարութիւնները մի անգամից չաղթելու ձգտու-
մը: Լեզուի դասերին դժուարութիւն կարող է չա-
րուցանել մի կողմից ինքը բուն լեզուն, միւս կող-
մից լեզուով արտայայտած միաքր, ծանօթու-
թիւնը, բովանդակութիւնը: Քանի անգամ

ուսուցիչն լեզուի ուսուցիչը արդէրքների է հանդիպում,
երբ որ նա, անչարիր բաները իրար հետ խառնելով
և շփոթելով, երբեմն սաղիս է լեզուի բացասու-
թիւն, իսկ երբեմն պարզաբանում է բովանդակու-
թիւնը, չզգալով, թէ դժբա տարրեր բաներ են:
Гайка, имперія, буржуа, бойкотъ—արդեօք սո-
քա լով բառեր են, որ պէտք է միայն թարգմանուին,
թէ զազալիարներ են՝ նաև լուսարանութեան կա-
րօտ:—Մեր դասաղիքը այնպէս է կազմուած, որ բո-
վանդակութեան դժուարութիւնները թողնում
է հայերէն բաժնին, իսկ ուսուցիչն բաժնին չատկաց-
նում է միայն լեզուի դրադմունքը:

Բոլոր պակասութիւնները ի մի ամփոփելով, մեր
պահանջն է, որ ուսուցիչն դասերի ժամանակ աւելի
կապակցական լեզուն ախրապետէ՝ փոխանակ բառեր
անդիր անել սաղու, աւելի կենդանի խօսքը, քան
զիրքը, աւելի զուտ լեզուական ուսուցումը, քան նաև
ծանօթութիւններով ծանրաբեռնութիւնը: Դասա-
ւանդութեանը միշտ պարպիսի բնթացք սաղով, մենք
հաւատարիմ կը մնանք հողերանական մի մեծ օրէն-
քին, որ չզխանք թէ ինչպէս՝ բայց հրաշքներ է գոր-
ծում: Կեանքի շատ հանգամանքներում հողերանական
անուղղակի ներգործութիւնն աւելի խորն է սղ-
զում, աւելի բեղմնաւոր է դառնում, քան ուղղա-
կի ներգործութիւնը: Զոր օր. լաց բլոյ մանուկին
ուղղակի հրամայեցէք, որ դադարեցնէ իւր լացը, նա
աւելի կը փղծկայ և կը հեկեկայ. ամանչողից մեծ հա-
լարակութեան մէջ պահանջեցէք, որ խօսի, նա աւե-
լի կը պապանծուի. «աղքատ» բառը սխալմամբ «աղ-
ղատ» կարդացող մանուկին հէնց 10 անգամ էլ որ
փորձէք ուղղել, նա միշտ չա՛ւառութեամբ դարձեալ

«աքղաս» — «աքղաս» կը կարգայ: Սորա ուղղակի ներգործութեան ապարդիւն ջանքերի օրինակներ են:

Զարմանալի են անուղղակի կամ կողմնակի ներգործութիւնները, թէպէտ նոցա բնութիւնը տակաւին մութ է: Ոմանք ասում են, թէ դոքա կատարվում են դիտակցութեան շէմքի սակից, ոմանք՝ թէ անդիտակցութեան մէջ, ուրիշներն էլ այլատէս են բացատրում: Այսպէս թէ այնպէս անուղղակի ներգործութիւնը հոգեբանական անհերքելի իրողութիւն է, որ ուսուցչի շատ ապարդիւն ջանքերին օդնութեան է հասնում: Ինչպէս անայիւրք, այս սեսակէտից, լեզու ուսումնասիրելու համար ահանջը և աչքը դանդաղան յոժերի զօրութիւն ունին, և առաջինը միշտ աւելի դերադասելի է:

4). Մեզ մնում է մեր դասագրքի վերջին յատկութիւնն էլ չիշատակել: Խիստ մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել և՛ ուսերէն և՛ հայերէն բաժիններին կցորդած վարժութիւնների վերայ, այս նկատմամբ ի հաշիւ պէտք է առնել նախ և առաջ այն հանգամանքը, որ հայերէնում 3-դ բաժանմունքի աշակերտներն արդէն բաւական (2 տարով) առաջ են գնացել, իսկ ուսերէնը նոցա համար տակաւին նոր պէտք է սկսուի,

Վարժութիւնները մեր ուսումնարանների թոյլ կողմն են կազմում: Կամ աւելի լաւ է ասել, որ մերոնք իսկապէս դադափար չունին, թէ լեզուի բեղմնաւոր վարժութիւնները ո՞րոնք են: Մեր ուսուցիչները զիտեն միայն արտագրութիւն, թելադրութիւն և յանպարտատից փօքրիկ շարադրութիւններ: Իսկ թէ դոքա ինչպէս կատարվում են ամենա-անմիտ և անպատու կերպով, թէ ինչ-

պէս կցորդուրայն խարխափել են տալիս, մինչև որ աշակերտները յոդնում և իսպառ վիատում են, այս անձանօթ չպէտք է լինի ընթերցողին: Տէր Աստուած, որչափ ապարդիւն են մեր լեզուի դասերը, նոյն իսկ մայրենի լեզուի դասերը: Ոչ մի աղգ այնպէս թափուր չէ միտքը արտայայտելու շնորքից, ինչպէս ուսանալերս (ափսոս չէն տանկահայերը). մենք չենք կարողանում ժողովների մէջ արձանագրութիւն կաղմել, ընկերութիւնների կանոնադրութիւնները հարադաս հայերէնով յօրինել, և ոչ իսկ հասարակ հրաւեր կամ յայտարարութիւն շարադրել: Եւ ուրեմն իրաւունք ունինք առանձնապէս յանձնարարել մայրենի և օտար լեզուի վարժութեանց խիստ լուրջ խնդիրը:

Ինչպէս ընթերցողը կը համոզուի, մենք ձգտում ենք բանաւոր, գրաւոր և ընթերցանութեան վարժութիւնները՝ իրանց նպատակի համեմատ՝ կանոնաւորել, սիստեմի և մեթոդի տակ դնել: Կան բազմաթիւ և բազմազան խորհրդաւոր վարժութիւններ, որ մեր ուսումնարաններում չեն դորձածվում: Մենք առաւելապէս աշխատում ենք, որ ամէն մի յօդուած ուսումնասիրելիս՝ աշակերտը ինչ մտաւոր պաշար որ կազմել է, այն պաշարի համեմատ էլ յարմար վարժութիւններ ստանայ: Ուրեմն նա էլ Փրագներ կը յօրինէ, բայց ոչ քարացած անշունչ Փրագներ, այլ կենդանի լեզուի արտայայտութիւն, կենդանի լեզուի բղխումն: Հարկաւ միշտ հայերէն լեզուի վարժութիւնները աւելի բարդ և անկախ կը լինին, իսկ ուսերէն լեզուինը աւելի պարզ, այն ևս չենուած հայերէնում ստացած հմտութեան վերայ: Ուրեմն այս կողմից



րենի լեզուն կը լինի հիմք, օտարը նորա վերայ կառուցած շէնք:—

Վերոյիշեալ սկզբունքները աւելի բնագործակօրէն պէտք է իրագործուին հեռեւեալ զրքերում, այսինքն ուսման 4-դ, 5-դ և 6-դ դասընթացների համար յօրինուելի զրքերում:

Արդ, ձեռնհասներից խնդրում ենք չզլանալ իրանց կարծիքներով և դիտողութիւններով այս ձեռնարկի մասին, մանաւանդ զործադրող ուսուցիչներէից խնդրում ենք, որ նոքա իրանց նկատած դժուարութիւններն ու թերութիւնները մեզ հաղորդեն, որպէս զի այդ բոլորը ի նկատի ունենանք զործի շարունակութեան ժամանակ:

Մի երկու խօսք էլ տանք զրքի մէջ դետեղուած գուղընթաց յօդուածների մասին:— Ինչպէս ընթերցողը կը տեսնէ, իւրաքանչիւր ուսերէն բնագրի դէմ, զրքի մէջ առաջարկուած է հայերէն հաւասարը, որը որ իւր բովանդակութեամբ հիմք է դառնալու օտար լեզուին անցնելու համար: Արդ, այդ գուղընթացները միշտ մի և նոյն բնութիւն չունին. ոմանք բացէիբաց թարգմանութիւն են, այն ևս կսմ ուսերէնից հայերէն, զոր օր. Պուշկինի հէքիաթները, Կրիլովի առակները, կսմ՝ հայերէնից ուսերէն, զոր օր. «Միժեռնակը», և կսմ շատ մօտիկ նմանութիւն են. զոր օր. Պատկանեանի «Օրօրոցի երգը» Լերմոնտովի նմանութեամբ, իսկ ոմանք թէպէտ և բառացի թարգմանութիւն չեն, բայց զանազան տեսակէտից մի և նոյն նիւթի մասին գրուածքներ են, այսինքն զանազան կողմի աշխարհայեացքներ են մի և նոյն առարկայի մասին, զոր օր. Ահարոնեանի և Աբսակովի «Կարասները»:

Թէ դասերի ժամանակ թարգմանութիւնները ինչպէս պէտք է զործ ածուին, զրքի ծանօթութիւններում բաւական բացատրութիւն ենք տուել: Իսկ թէ ծանօթ աշխարհայեացքից ինչպէս պէտք է անցնել անծանօթ աշխարհայեացքին, առ այժմ թողնում ենք, որ ուսուցիչը ինքը զանէ այդ վախճանով համապատասխան զուգորդութիւններն ու կամուրջները, բայց չամենայն դէպս աւելորդ չի լինի, որ նա կանխաւ կարգայ վերը չիշած «Մշակի» 19 և 20-րդ համարները, ուր որ հէնց նոյն իսկ մեր «Թօն արա» և „Туча черная“ կը գտնէ:

Պարտք ենք համարում շնորհակալութիւն յայտնել պ. Յարութիւն Թուճանեանցին, որ հաճեցաւ իւր անտիպ «Սալթան թաղաւորի հէքիաթի» գեղեցիկ թարգմանութիւնը յանձնել մեզ այս զրքի մէջ դետեղելու:

ՍԵՂԻՍԷ ՄԱՆԴԻՆԵԱՆ

1906 թ. Հոկտեմբերի 10.

Թիֆլիս

Заучиваніе наизусть

1

Саранча летѣла, летѣла

И сѣла.

Сидѣла, сидѣла... все сѣла

И вновь улетѣла.

с, а, р, н, ч, л, е, т, и, ъ, д, в, ѓ, ь, у.

2

Ночной зефирь,

Струить эфирь.

Шумить,

Бѣжить

Гвадалквирь.

о, з, ф, ѓ, ш, м, ѓ, ж, г, к.

3

Все мое, сказало злато;

Все мое, сказалъ булатъ.

Все куплю, сказало злато;

Все возьму, сказалъ булатъ.

н, ю.

4

Колокольчики звенять,
 Барабанчики гремятъ,
 А люди-то, люди
 На цыганочку глядятъ.
 А цыганочка-то пляшетъ,
 Въ барабанчики-то бьетъ,
 И шириночкой-то машетъ,
 Заливается-поетъ:
 „Я пѣвунья, я пѣвица,
 Ворожить я мастерица“.

я, ц, в.

5

Ѣду, Ѣду, не свищу,
 Какъ наѢду, не спущу.

щ.

6

Мчатся тучи, вьются тучи;
 Невидимкою луна
 Освѣщаетъ снѣгъ летучій;
 Мутно небо, ночь мутна.
 Ѣду, Ѣду въ чистомъ полѣ;
 Колокольчикъ динь-динь-динь...
 Страшно, страшно поневолѣ
 Средь невѣдомыхъ равнинъ!

і, х.

7

Птичка летаетъ,
 Птичка играетъ,
 Птичка поетъ.

Птичка летала,
 Птичка играла,
 Птички ужъ нѣтъ.

Гдѣ же ты птичка?

Гдѣ ты пѣвичка?

Въ дальнемъ краю
 Гнѣздышко вьешь ты:
 Тамъ и поешь ты
 Пѣсню свою.

ц.

Р-шдшц шрѣ, шду шрѣ.

Р-шрѣ, шшдр рол шрѣ:

р.

Цшдрѣ, шшдрѣ, гшд шрѣ.

Р-шшдрѣ шрѣ и шрѣ:

Туча черная...
 Ополчилась
 И расширилась,
 И ударила,
 И пролилась
 Слезой крупною,
 Проливнымъ дождемъ...
 Напилась воды
 Земля досыта.

Письмо и чтение*)

1. Летѣть, улетѣть, садить-ся, сѣсть, сѣль, сѣла, сѣдять, сѣбсть, сѣль, сѣла, новый, вновь, саранча.

2. Эфиръ, зэфиръ, ночь, ночной, струя, струитъ, шумъ, шумитъ, бѣгъ, бѣжитъ, рѣка, Гвадалквивиръ.

3. Злато, золото, мой, мое, всѣ, все, булатъ, сказать, сказалъ, сказало, купить, куплю, взять, возьму.

4. Звонъ, звенятъ, колоколь, колокольчикъ, человекъ, люди, барабанъ, барабанчикъ, цыганъ, цыганка, цыганочка, глядѣть, плясать, глядятъ, пляшетъ, бить, бьетъ, ширинка, шириночка, заливаются, пѣть, пѣвица, пѣвунья, ворожить, мастеръ, мастерица.

5. Свистать, свистѣть, свистнуть, свищу, какъ, гду, нагду, спускать, спуцу.

*) Каждый параграфъ читается полностью, пишется же только обозначенное курсивомъ.

6. Мчатся, мчатся, виться, вьются, туча, видѣть, невидимка, луна, освѣщать, освѣщаетъ, снѣгъ, летать, летѣть, летучий, мутное, мутна, мутно, ночь, небо, чистое, чистый, поле, въ полѣ, колоколь, колокольчикъ, страхъ, ѣхать, страшный, страшно, воля, неволя, поневоля, среди, средь, вѣдать, невѣдомый, равнина, равнины, равнинъ.

7. Летать, играть, пѣть, пѣвичка, пѣснь, птица, птичка, птички, есть, не есть, нѣтъ, даль, дальний, край, вить, вьешь, гнѣздо, гнѣздышко, свой.

ѳ—ѳедоръ, ѳома.

Группы словъ на ѳ и ѳ.

Летѣть, сѣсть, сѣль-	Летаетъ, сѣль, сѣль
дать, вновь, ночь, шу-	эфиръ, шумитъ, бѣгъ,
мѣть, бѣжать, сказать,	сказаль, купить, взять,
купить, взять, глядѣть	звонъ, колоколь, ба-
плясать, бить, пѣть,	рабанъ, цыганъ, мчат-
пѣвунья, даль, дальний,	ся, снѣгъ, страхъ, зе-
спускать, мчатся, средь,	вить, вьешь, свистѣть, фиръ.
вѣдать.	

Буква о въ письмъ и произношеніи.

Ночной, мое, возьму, колокольчики, поеть, ворожить, поешь, свою.—

Вновь, золото, сказало, злато, цыганочка, то, шириночкой, гнѣздышко, невидимкою, мутно, небо, чистомъ, полъ, страшно, поне-волъ, невѣдомыхъ.

ՌՈՒՍԵՐԷՆ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆՆ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ
ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ռուսաց այբուբենի հնչմունքները ոչինչ դժուարութիւն չեն պատճառում հայ մանուկներին, որովհետև այն հնչմունքներն արդէն մայրենի լեզուից ծանօթ են նոցա: Նորութիւն են դառնում նոցա համար միայն Մ և Ե, սակայն Մ բարդ հնչիւնը նորա հեշտ են արտասանում, իսկ Ե-ն նոյնպէս չպէտք է դժուարացնէ հայ մանուկին, որովհետև մենք ունինք նման հընչիւն (ը):

2. Հայերէնում յայտնի չեն կոշտ և փափուկ արտասանութեան նշանները (знаки твердаго и мягкаго произношенія—ъ, ь) և օ տառի տարբեր պաշտօնը գրութեան և արտասանութեան մէջ, ուստի և դոցա համար գրքի մէջ առաջ են բերած հատուկ վարժութիւններ:

3. Ռուսերէն գրագիտութեան ուսումը հայ մանուկի համար հեշտանում է այն հանգամանքով, որ մեր նորագոյն ծրագրով նա՝ արդէն երկու տարի առաջ՝ ընտելանում է մայրենի լեզուի գրագիտութեան: Այս արուեստը նորա համար այլ ևս նոր բան չէ. նա գիտէ, որ խօսքը կազմըւած է բառերից, բառերը վանկերից, վանկերը հնչիւններից: Հետևապէս ուսերէն դասերի ժամանակ կարելի է, առանց մեծ նախապատրաստութիւնների, ուղղակի սկսել տառերի,

վանկերի և բառերի գրութիւնն ու ընթերցանութիւնը, գործ դնելով այն նիւթերը, որ մանուկներն արդէն յառաջագոյն բերան են սերտել:

Այս դէպքում, ուսուցիչը կարող է գործ դնել գրագիտութեան այն շաւիղը կամ մեթոտը, որին որ ինքն աւելի վարժուած է: Սակայն, մի և նոյն ժամանակ, պարտք ենք համարում ծանուցանել և այն, թէ հնչական կոչուած մեթոտը չէ լաւագոյն մեթոտ, ինչպէս որ ոմանք ի հնուց անտի պնդում են *): Հնչական մեթոտի համեմատ, մեր առաջին („саранча“) բառը կը լուծուի հետևեալ կերպով. се, а—са; ре, а, не—ран (са—ран); че, а—ча (са—ран—ча), саранча. Բայց այս եզրափակութիւնը ճիշտ չէ. իսկապէս ստացուեցաւ ոչ թէ „саранча“ այլ ինչ որ մի կա կօֆօնի կամ շարաձայնութիւն „сеареанечеа“:

Որպէս զի հնչական մեթոտը պահպանուի իսկական կատարելութեամբ, միայն մի ելք կայ, և այն է, որ բաղաձայն տառերը արտասանուին իրանց բնութեան համեմատ, այսինքն որ արտասանուին այն ձայնաւորի հետ կցուած (բաղ նշանակում է կից), որի հետ որ նոքա վանկերի մէջ՝ արդէն իւրեանց բուն կազմութեամբ՝ միացած են, արդէն օրգանական կերպով ձուլուած են: Ըստ այսմ, մենք մեր („саранча“) օրինակի մէջ նախ կը վնտոենք վանկերի արմատ կամ ձայնաւոր հնչիւնները (а, а, а): Ապա կը կազմենք առաջին վանկը (а, са). յետոյ՝ երկրորդ վանկը (а, аһ, ран; са—ран). վեր-

*) 40 տարի առաջ մենք էլ, որպէս Պետերբուրգի ուսանող, ընդմանուր հոսանքին հետևելով, մեր տուրքն ենք վճարել այդ մոլորութեան և յօրինել ենք «գրել-կարդալու» մի ձեռնարկ:

ջապէս՝ երրորդ վանկը (а, ча; са—ран—ча), որով իսկութեամբ կունենանք „саранча“, առանց աւելորդ շարաձայնութիւնների: Սակայն թիւրիմացութիւններից գերծ մնալու համար, այս մեթոտը մենք այլ ևս հնչական չենք կոչի, այլ կանուանենք օրգանական կամ կազմական կերպի մեթոտ, քանի որ այդ դէպքում բաղաձայն տառը անխզելի կերպով արտասանվում է այն ձայնաւորի հետ կցուած, որի հետ որ նա վանկի մէջ միացած է—իւր բուն կազմութեամբ կամ օրգանական կերպով: Այս կարգով բաղաձայնը վանկի մէջ միշտ կապուած է մնում իւր ձայնաւորի հետ, զոր օր. „санъ“—а, аһъ, санъ; „сынъ“—ы, ынъ, сынъ; „сонъ“—о, онъ, сонъ; „суть“—у, уть, суть և այլն: Մենք այլ ևս այս մեթոտի մանրամասնութիւններով չենք զբաղուի:—

4) Նոյն իսկ տաղտկացուցիչ այբուբենը սովորեցնելու ժամանակ, չպէտք է մոռանալ, որ դասարանում գլխաւոր գործն է կենդանի խօսքը, բանաւոր լեզուն: Իսկ օտար լեզուի նկատմամբ, այս աստիճանում գլխաւոր գործ պէտք է համարենք անգիր կամ բերան անելը, բայց հարկաւ ամէնից առաջ մայրենի լեզուով նախապատրաստութիւնը նոյն վախճանի համար:

Այս կարգը պահելով, մեր ամէն մի հատուածի փոքրիկ բովանդակութիւնը նախ պէտք է համառօտակի յայտնել մայրենի լեզուով, այն ևս ըստ հնարաւորութեան հարազատ հայացի դարձուածքներով, և ոչ թէ բառացի այբանդակութիւններով կամ մանրակրկիտ ստրկութեամբ, և ի հարկէ այնպիսի կապակցութեամբ, որ հնարաւոր լինի՝ ուսուերէն բնագրի համեմատ՝ մի բառարան կազմել: Զոր օր. առաջին հատուածի նրկատմամբ մօտաւորապէս այս ընթացքով զբոյց կանենք աշակերտների հետ.

«Տղէրք, ես ձեզ կը սովորեցնեմ մի փոքր ոտանաւոր ուսուցիչ լեզուով մորեխի մասին:— Դուք գիտէք, որ մորեխը թռչելով գալիս է մեր արտերը, նստում, ուտում է, ուտում է, մինչև որ լաւ կշտանում է, յետոյ տեղից էլի թռչում է և հեռանում: Եկէք, հիմի տեսնենք, թէ որպէս զի ուսուցիչն պատմութիւնը հասկանանք՝ մեզ ինչ բաներ են հարկաւոր: Ահա տախտակի վրայ գրում եմ.

Մորեխ—

թռչել—

նստել—

ուտել—

Ամէն մի գրած բառի դէմ, համապատասխան ուսուցիչը ոչ թէ գրվում, այլ ուսուցիչը բերանացի թարգմանում է, իսկ աշակերտները կրկնում են:

Երկրորդ հատուած. «Տղէրք, դուք լսել էք Գվարալիվիվիր գետի անունը: Այդ գետը Իսպանիայումն է, Ֆրանսիայի և Իտալիայից էլ հեռու աշխարհում: Իսպանիայում գիշերուայ գեփիւնը սփռում է հոտաւէտ եթեր, նարնջի և կիտրոնի անուշաբուրութիւն, իսկ Գվարալիվիվիրը գոռում-գոչումով կատաղի վազում, գլորվում է»...

Դարձեալ—հարկ եղած բառարանը:

Երրորդ հատուածի առթով պէտք է ասել «փողով լսանել» և «գորով առնել» կամ «զնել» և «խել»... և այլն:

Այդպէս նախապատրաստելուց յետոյ՝ սկսվում է ուսուցիչն բնագրի ուսումնասիրութիւնը, կամ աւելի ճիշտն ասել, սերտողութիւնը: Սերտել տալը մի արուեստ է, որ աշխուժով և հաճութեամբ պէտք է կատարել:

Անգիր անել տալու գործը այս տողերում մի անգամ ընդ միշտ կը նկարագրենք, բայց

թող ուսուցիչը չը մոռանայ, որ հետեւաւում, ամէն մի դասին, նոյնը հարկաւոր կը լինի, գրեթէ նոյնութեամբ, միշտ գործ զնել:

Արդ, ուսուցիչը պէտք է անգիր անելու նիւթը նախ ամբողջապէս գլխից մինչև վերջը կարգայ կամ ասէ գեղեցիկ արտասանութեամբ, ապա և մաս մաս սերտել տայ աշակերտներին: Մաս մաս սովորեցնելու ժամանակ՝ ամբողջութեան կտորները պէտք չէ իրարից անդամալուծել անբնական կերպով, այլ այնպէս տրոհել, որ իմաստի համեմատ՝ յօդաւոր մասեր կազմուեն, երբեմն մի տողի, երբեմն երկու կամ աւելի տողի ընդարձակութեամբ, նայելով ներքին կապակցութիւններին: *) Մի մաս ուսուցանելուց յետոյ՝ նախընթաց մասերը պէտք է նորա հետ ի միասին միաւորած կրկնուեն, գլխից մինչև սովորած կէտը: Արդիւնքն այն պէտք է լինի, որ աշակերտը հասկանալով, զգալով և վայելուչ արտասանութեամբ արտայայտէ այն, ինչ որ բերան է առնում: Ոչ միայն հատ հատ աշակերտ, այլ և խմբով ի միասին ամբողջ դասարանը պէտք է կարողանայ ասել սերտածը մաքուր և ներդաշնակ ձայնով, չմոռանալով, որ առանձնակի մէկ աշակերտը պէտք է արտասանէ բարձրաձայն, իսկ խմբի ամբողջութիւնը՝ կիսատ ձայնով, այսինքն ձայնը մի կէս տոնով իջեցրած:

5) Միշտ բանաւոր ուսածներից պէտք է բաղել և այն նիւթը՝ որ պէտք է գրուելի: Արդէն վերևը ասել ենք, որ գրութեան համար բա-

*) Ձօր օրինակ

Мчатся тучи, выются тучи.

Մի մաս—մի տող.

Невидимкою луна

Освѣщаетъ снѣгъ летучій.

Մի մաս—երկու տող:

ւական է շատանալ այն չափով, ինչ որ վերևի վարժութիւնների մէջ տպագրուած է նօտր գիր (курсивом):

Սկզբում ի հարկէ գործը դանդաղ առաջ կերթայ, ուստի բաւական պէտք է համարել միայն բառի ձայնաւորների գրել տալը: Ապա քիչ քիչ բաղաձայն էլ կը գրուի, բառի վանկերը կազմել տալու համար: Բայց դարձեալ շատ շուտ առաջին բառը (летѣть) պէտք է գրուի լրիւ, այն ևս այսպէս, կազմակերպիչ մեթոդի համեմատ.

ձայնաւորներ . . . е, ъ *)
վանկերի կազմուիւնն е, ле; ъ, тѣ, мягко
(МЯГКО)

վանկ. վանկ ле—тѣть;
ամբողջ բառ летѣть.

Այսպէս գրել տալուց յետոյ՝ „летѣть“ բառը ցոյց է տրվում նաև շարժական տպագիր տառերով, որ և կարդացվում է:

6) Որպէս զի ընթացանութիւնը հէնց սկզբից կանոնաւոր ընթացք ստանայ և զիր կապելու ժամանակ աշակերտները, ըստ սովորութան, տառեր կուլ չտան կամ յետ ու առաջ չտանեն, բառերը աղճատած չարտասանեն,—դարձեալ պէտք է դիմել կազմակերպիչ մեթոդին: Ըստ այսմ, մանուկները նախ ցած ձայնով կամ շշուշելով փնտուում են բառի մէջ ձայնաւորները և այդպէս իմանում են, թէ նորա մէջ քանի վանկ կայ: Ապա, դարձեալ կամաց ձայնով, կազմում են վանկերը: Եւ միայն այնուհետև բարձրաձայն արտասանում են բառի ամբողջութիւնը: Կարդանք, գորօր., „улетѣть“ բառը. աշակերտ-

*) Հէնց այստեղ մանուկները տեղեկանում են, թէ ուսերէնում մի քանի նշաններ կան մի հնչիւնի համար, ինչպէս և հայերէնում (ե, է—լ, ճ և այլն):

ները կամաց կարդում են ձայնաւորները—у, е, ъ. ապա կազմում են վանկերը—у; е ле (у—ле); ъ, тѣ, тѣть (мягко) (у—ле—тѣть). վերջապէս բարձր ձայնով—„улетѣть“.

7) Ինքնին հասկանալի է, որ դասերին իշխող է հանդիսանում ուսերէն լեզուն, միայն հարկ եղած դէպքերում ուսերէն ասածը նոյն ժամայն թարգմանվում է նաև մայրենի լեզուով („А знаете гдѣ находится Испанія?“—«Գիտէ՞ք թէ որտեղ է Սպանիան»): Աշակերտի ամէն մի սխալ կամ ծուռ ասածը պէտք է մանրակրկիտ կերպով հալածուի, անպատճառ ուղղուի ու սրբագրուի և այնպէս կատարելագործուածը ամբողջ դասարանի խմբով կրկնուի:

8) Վերջապէս ի նկատի պէտք է առնուլ այն հանգամանքը, որ ուսուցչի ամենաբարեխիղճ ջանքերից յետոյ, դարձեալ կերևայ, որ մանուկները շատ բան թուրթակի պէս անմտաբար բերան են առնում, չեն հասկանում, մոռանում են, բայց պէտք չէ յուսահատուիլ և կոպիտ միջոցներ գործ ածել, որ նոցա գլխի դատարկութիւնները մի կերպ լցուին: Ժամանակով նոցա մտքի մէջ ամենայն ինչ կարգի կու գայ և անշուշտ կը հաստատուի, որ այն տեղ նախկին ջանքերից ոչինչ չի կորել: Պէտք է զինուել համբերութեամբ և մանկական քայլերը միշտ քաջալերելու պատրաստակամութեամբ: Այսօրուայ թերին վաղը անշուշտ կը լրանայ: Եւ երբէք չմոռանանք, որ մենք գործ ունինք երրորդ տարուայ ուսման աշակերտների հետ:

ХРЕСТОМАТІЯ

ЗУСЛУСІРР

ՍԱԼԹԱՆ ԹԱԳԱՒՈՐԻ ՂԵՔԻԱԹԸ

Երեք աղջիկ երեկոյին
Փանջարի մօտ մանուձ էին:
— Թէ արքայի կին լինէի,
Սասց մէկը, — կը կանչէի
Արար աշխարհ այն ժամանակ,
Ճաշ կը տայի ինքս մենակ:
— Թէ լինէի արքայի կին,
Սասց միւսը իր քոյրիկին, —
Սադ աշխարհի համար մենակ
Կը գործէի կառւ ճերմակ:
— Թէ լինէի արքայի կին,
Երրորդն սասց կարօտաղին, —
Քաշ գիւցաղըն կը ծնէի,
Հայր-արքային կը բաշխէի:

Հէնց այս խօսքերն սասց, չսասց —
Սենեակի դուռն հանգարտ նուսաց,
Ու ներս մտաւ այն աշխարհի
Քաշանդօր արքան բարի:
Յանկապատի յեան դրսից
Անց կենալիս լսեց հեռուից:
Վերջին խօսքին հաւան կացած՝
Երրորդ քրրոջ գիմեց սասց.
„Բարո՛վ, նախշուն զեղեցիլունի՛.
Գնանք, եղի՛ր դու թագունի,
Ինն ամսից յեա՛ մինչ հոկտեմբեր՝
Ինձ համար մի գիւցաղն բեր:

Сказка О ЦАРЬ САЛТАНЪ

Три дѣвицы подѣ окномѣ
Пряли поздно вечеркомѣ.
Кабы я была царица,
Говоритъ одна дѣвица,
То сама на весь бы мирѣ
Приготовила я пирѣ.
Кабы я была царица,
Говоритъ ея сестрица,
То на весь бы мирѣ одна
Наткала я полотна.
Кабы я была царица,
Третья молвила сестрица,
Я-бѣ для батюшки-царя
14. Родила богатыря.

Только вымолвить успѣла,
Дверь тихонько заскрипѣла,
И бѣ свѣтлицу входитъ царь,
Стороны той государь.
Во все время разговора
Онѣ стоялъ позадь забора;
Рѣчь послѣдней по всему
Полюбилася ему.
„Здравствуй, красная дѣвица,
Говоритъ онѣ: будь царица,
И роди богатыря
Мнѣ къ исходу сентября.

Դուք էլ, քոյրեր իմ սրտակից,
Ելէք, զնանք մենք այս տեղից.
Եկէք ինձ հետ պարսա զնանք,
Ձեր քրրոջ հետ այնտեղ մնանք.
Մէկը զառնայ կտաւ քործող,
Միւսը զառնայ նաչ պատրաստող»:

Հայրախնամ արքան ելաւ,
Երեքին էլ հետք տարաւ:
Էլ չսպասեց թագաւորը—
Ու պսակուեց հէնց նոյն օրը:
Սալթան արքան խնշոյք սարքեց,
Թագուհու հետ սեղան նստեց:
Երբ սեղանը հաւաքեցին,
Արքայական հարս ու փեսին
Հիւրերն ազնիւ առան տարան
Դէպ առադատս հարսանեկան:
Ձուրնակ քոյրը զազգա՛ի մօտ,
Խոհարարն էլ բուրայի մօտ՝
Նախանձուձ են, կատուձ, լալիս
Ու թագուհուն երնէկ սալիտ:
Իսկ նա՛ իբրև խօսքի տէրը
Յղիացաւ նոյն զիշերը:

Այն ժամանակ պատերազմ կար—
Սալթան աչքան պիտի գնար:
Նա հեծնելով իր նժոյզ ձին՝
Հրածեշտ առաւ իր սիրածին:
Ասաց, որ լաւ պահի իրան,
Սիրի մարդուն ձինչ զերեզման:

Вы жъ, голубушки сестрицы,
Выбирайтесь изъ свѣтлицы,
Поѣзжайте вслѣдъ за мной,
Вслѣдъ за мной и за сестрой:
Будь одна изъ васъ ткачиха,
32 А другая—повариха.“

Въ сѣни вышелъ царь-отецъ.
Всѣ пустились во дворецъ.
Царь недолго собирался:
Въ тотъ же вечеръ обвѣнчался.
Царь Салтанъ за пиръ честной
Сѣлъ съ царицей молодой;
А потомъ честные гости
На кровать слоновой кости
Положили молодыхъ
И оставили однихъ.
Въ кухнѣ злится повариха,
Плачетъ у станка ткачиха—
И завидуютъ онѣ
Государевой женѣ.
А царица молодая,
Обѣщанье выполняя,
49 Съ той же ночи понесла.

Въ тѣ поры инвѣ оы ла.
Царь Салтанъ, съ женой простяся,
На добра-коня садяся,
Ей наказываль—себя
Поберечь, его любя.
Между тѣмъ, какъ онъ далеко

Սալթանն հեռու երկրում օտար
 Մարտնչում էր դեռ անդադար,
 Երբ օրհիւնն արքայական
 Ծնեց մանուկ հսկայական:
 Թագուհին իր արթուն աչքով
 Մի արծիւ էր իր ձաղի քով:
 Մի սուրհանդակ զրկեց, երթաց,
 Երեխի հօր աչքալոյս տայ:
 Քոյրերը նենդ ու զիւային
 Եւ Բարարիս չար խրնամին՝
 Նորան կորցնել կամենայով,
 Սուրհանդակին բռնել տալով՝
 Ուղարկում են այլ սուրհանդակ
 Նաղորդի լուրն այս դժնդակ.
 Թէ ծնուել է մի երեխայ,
 Ոչ աղջիկ է, ոչ էլ աղայ,
 Ոչ մինիկ է և ոչ էլ զորա,
 Այլ անասուն անչալս ու խորթ:
 Նէնց որ լսեց մեր Սալթանը
 Սուրհանդակի ասած բանը,
 Խիտ կատաղեց ինքրն իրան,
 Ուղեց խելոյն կախել նորան.
 Բայց մեղմացաւ նա այս անգամ
 Ու այսպիսի զրեց պատգամ.
 «Ըստասեղէք մինչև զայլս,
 Գատասանով վնիւ ասուս».

Եւ պատգամը կռան տակը
 Ահա էկաւ սուրհանդակը:
 Իսկ նենդ քոյրերն խելոյնեթ
 Չար Բարարիս պառաւի հեա՝

Бьется долго и жестоко,
 Наступает срокъ родинь;
 Сына Богъ имъ далъ въ аршинъ,
 И царица надъ ребенкомъ,
 Какъ орлица надъ орленкомъ.
 Шлетъ съ письмомъ она гонца,
 Чтобъ обрадовать отца.
 А ткачиха съ поварихой,
 Съ сватьей бабой Бабарихой,
 Извести ее хотятъ,
 Перенять гонца велятъ;
 Сами шлютъ гонца другого
 Вотъ съ чѣмъ, отъ слова до слова:
 „Родила царица въ ночь
 Не то сына, не то дочь;
 Не мышенка, не лягушку,
 А невѣдому звѣрюшку“.

Какъ услышалъ царь-отецъ,
 Что донесъ ему гонецъ,
 Въ гнѣвѣ началъ онъ чудесить
 И гонца хотѣлъ повѣсить;
 Но, смягчившись на сей разъ,
 Далъ гонцу такой приказъ:
 „Ждать царева возвращенья
 80 Для законнаго рѣшенья“.

Էдетъ съ грамотой гонецъ,
 И пріѣхалъ наконецъ.
 А ткачиха съ поварихой,
 Съ сватьей бабой Бабарихой,

Խմեցնում են սուրհանդակին,
 Թուղթը փոխում կռան տակին:
 Եւ նա ահա բերաւ հարբած
 Կեղծ պատգամը այսպէս զրուած.
 «Իշխաններին Սալթան արքան
 Ուղարկում է սաստիկ հրաման,
 Որ թագուհուն երեխի հետ
 Ծովը ձգեն իսկոյնեթ»:
 Էլ նա՛րն ինչ: Այս հրամանից
 Նորանք տխուր ու վշտալից՝
 Խմբով եկան ննջարանը
 Ու արքայի պատուիրանը
 Խեղճ թագուհու ձօն կարգացին,
 Մօր ու որդուն ափսոսացին:
 Եւ թագուհուն իսկոյնեթ
 Նստացնելով իր որդու հետ՝
 Տակառի մէջ պինդ կպրեցին,
 Ովկիանոսը զրլորեցին:

Կապոյտ երկնում սաստիկ ցոլում,
 Կապոյտ ծովում ալիք ծփում.
 Երկնի վերայ ամպ է գալիս,
 Ծովում տակառն է լող տալիս:
 Հէգ թագուհին տակառի մէջ
 Իր սև օրը լայրով անվերջ,
 Որդուն պահում ու պահպանում,
 Մեծացնում էր, սրնուցանում:

Обобрать его велятъ;
 До-пьяна гонца поятъ,
 И въ суму его пустую
 Суютъ грамоту другую—
 И привезъ гонецъ хмѣльной
 Въ тотъ же день приказъ такой:
 „Царь велитъ своимъ боярамъ,
 Времени не тратя даромъ,
 И царицу, и приплодъ”
 Тайно бросить въ бездну водъ“.
 Дѣлать нечего: бояре,
 Потуживъ о государѣ
 И царицѣ молодой,
 Въ спальню къ ней пришли толпой.
 Объявили царску волю—
 Ей и сыну злую долю,
 Прочитали въ слухъ указъ,
 И царицу въ тотъ же часъ
 Въ бочку съ сыномъ посадили,
 Засмолили, покатали
 И пустили въ окіянь—
 106 Такъ велѣлъ-де царь Салтанъ.

Въ синемъ небѣ звѣзды блещутъ,
 Въ синемъ морѣ волны хлещутъ;
 Туча по небу идетъ,
 Бочка по морю плыветъ.
 Словно горькая вдовица,
 Плачетъ, бьется въ ней царица;
 И растетъ ребенокъ тамъ
 Не по днямъ, а по часамъ.

Մեծառու՜ էր ոչ թէ օրով—
 Մեծանու՜ էր նա ժամերով:
 Մթնեց օրը. մայրը լալիս,
 Որդին ներսից ծայն է տալիս.
 «Է՛յ ալիքներ, իմ ալիքներ,
 Ըզրօսասէր կայտառ ջրեր.
 Ուր ուզում էք, զարնրվում էք,
 Քարալի՛ն ուտում ու մաշում էք,
 Հեղեղում էք եղրները,
 Բարձրացնում էք մեծ նաւերը—
 Մեր արևը մի՛ մթնացնէք,
 Տարէք ու մեղ ցամաք հանէ՛ք»:
 Ալիքները ախանջ արին,
 Զարնրւեցին մեծ տակառին,
 Յորձանք տարով՝ հանդարտ նորան
 Դուրս հանեցին, ցամաք՝ տարան:
 Զաւակի հետ մայրը փրկուած
 Ցամաք հողը իսկոյն՝ զգաց.
 Բայց տակառից ո՞վ կը հանի,
 Թէ որ Աստուած մի բան չանի:
 Ներսում որդին ոտքի կանգնեց
 Ու տախտակին զլուխը դէմ տուեց.
 «Ի՞նչպէս բանանք մի լուսամուտ,
 Ազատուենք այս անդիցը մութ»,
 Ասաց սղան ու զօռ տուաւ,
 Խուփը կտարեց ու դուրս թռաւ:

Մայր ու որդին ազատ ու լուռ՝
 Երան դաշտը, տեսան բրդուր.
 Շուրջը ծով էր մի ծիրանի,
 Բլրի գլխին կանաչ կաղնի.

День прошелъ, царица вопить...
 А дитя волну торопить:
 „Ты, волна моя, волна!
 Ты гульлива и вольна;
 Плещешь ты, куда захочешь,
 Ты морскіе камни точишь,
 Топишь берегъ ты земли,
 Подымаешь корабли—
 Не губи ты нашу душу:
 Выплесни ты насъ на сушу!“
 И послушалась волна:
 Тутъ же на берегъ она
 Бочку вынесла легонько
Помни мать свою...

Спи, младенецъ мой прекрасный,
Баюшки-баю.

Лермонтовъ.

ԵՐԳ ՊԱՆԴՈՒԻՄՏ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի սէր, ինձ ասան,
Թռչում ես այդպէս արագ:

Ա՛խ, թռիր, ծիծեռնակ,
Ծընած տեղս—Աշտարակ,
Անդ շինիր քո բունը,
Հայրենի կտուրի տակ:

Անդ հեռու արևոր
Հայր ունիմ սրբաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէցօր:

Երբ տեսնես դու նորան,
Ինձնից շատ բարև արան,
Ասան, թող նստի լայ
Իւր անբախտ որդու վրայ:

Դու պատմէ, թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես.
Միշտ լալով, ողբալով
Կեանքս մաշուել, եղել է կէս:

Ասիր, որ չբացուած՝
Թառամեցայ միացած
Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայրենի հողից զրկած.

Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Գունը մօտ չի գալիս:

Շուտով սառ հողի տակ
Կը պառկիմ այստեղ մենակ,
Թողնելով հօրս սրտում
Ցաւալի յիշատակ:

Ласточка

Пёвунья-ласточка, открой:
Куда ты держишь путь?
Летишь ты быстро надъ землей,—
Не хочешь и взглянуть!...

Ты въ Аштаракъ лети скорѣй,
Въ край сердцу дорогой!
Себѣ ты гнѣздышко тамъ свей
Подъ кровлею родной!

Тамъ мой отецъ-старикъ живетъ,
Тоскуеть онъ одинъ...
И кажый день несчастный ждетъ:
Вернется милый сынъ!

Когда увидишь ты его,
Снеси ему привѣтъ!
Скажи, что сына своего
Онъ не дождется,—нѣтъ!..

Скажи, что горе я терплю
Предъ чуждыхъ мнѣ людей—
И только слезы молча лью
Надъ участью своей.

Я увядаю здѣсь больной,—
Печалень, одинокъ,—
Какъ отъ земли своей родной
Оторванный цвѣтокъ.

Скажи ему, что для меня
Померкнулъ солнца свѣтъ,
И ночью спать не въ силахъ я,
И мнѣ покоя нѣтъ!..

Меня на чуждой сторонѣ
Могила пріютить...
О, пусть же память обо мнѣ
Отецъ мой сохранить!

Դէհ, սիրուն ծիծեռնակ,
 Հեռացիր, գնա՛ արագ,
 Դէպ հայոց աշխարհը,
 Ծընած տեղս—Աշտարակ:

Գողթեանց.

ՏԵՐՍԻՄՅԻ ՀԱՅԻ ԵՐԳԵՐԻՑ

Մարիամ ցատըր¹ դարկեր
 Մըզուրայ² լառները.
 Մէկ դի սիրին³ կարծէր,
 Մէկ դի՛ գառները: *)

Մարիամ, Թօնիր վառիր,
 Տնակը մուխ է.
 Երիսը մալիւլ⁴ է,
 Ացերը Թուխ է...

Մի լար, Մարիամ, մի լար,
 Ա՛ցերդ կաւրի.
 Քեզ պզտիկ կարգողին
 Տնակն աւերի...

Անդրանիկ.

1. Չաղըր (վրան), 2. Մընձուր լեառը, 3. Սիրու (հօտ), 4. Տրառւմ:

Скорѣй же, птичка, улетай!
 Прости, Господь съ тобой!
 Лети туда, въ армянскій край,
 Въ мой Аштаракъ родной!...

Пер. Юрiя Веселовскаго.

ՔՅՏՆԻԱ

Колоколъ стонетъ,
 Дѣвушка плачетъ
 И слезы по четкамъ бѣгутъ.

Насильно,
 Насильно

Отъ міра въ обители скрыта она,
 Гдѣ жизнь безъ надежды и ночи безъ сна.

Лермонтовъ.

*) Նա այս տողերն երգելով՝ կր լիշէ իր անցեալը, ազատ սարերու վրայ իր հովուական կեանքը, ուր երջանիկ էր: Եւ ապա կը երգէ՝ ներկան լիշելով—»Մարիամ, Թօնիր վառիր«
 և այլն...

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Գիլի ահու.

Գիլի ահու, գիլ չչինինք:

Ջան գիւլում, ջան ջանի,
Սիրող սիրառ սնց անի.
Ով ինձ սիրողից հանի,
Հոգին սատանէն տանի:

Սև օձ տեսնողը սև թռիկից էլ կը վախենայ:

Կուշար քաղցածին կամաց կը բրթէ:

Սևին սապոն, խեին խրատ:

(Նաղըր թողած) թանխէք տալ:
Ծիտը ամպերից մի բուռ չամիչ կը բե-րէէ:

Քեզ խրատ, որ չցանես մանր կառատ:

Примѣры переводовъ

Изъ за страха предъ волкомъ;

Неужели, изъ за страха предъ волкомъ,
намъ не строить деревни?

Чортъ бы его побралъ!

У страха глаза велики.

Соловья кормить баснями.

Глухому служить обѣдню.

Журавля сулить въ небѣ.

Не въ свои сани не садись.

МЕТОДИЧЕСКІЯ УКАЗАНІЯ
КЪ ТЕКСТУ

ՀԱՏՈՒԱԾՆԵՐԻ ԴԱՍԱԻԱՆԴՄԱՆ
ՃԱԻԻՂ

„Сказка о царѣ Салтанѣ“

Որպէս զի մայրենի լեզուն հիմք լինի, իսկ օտար լեզուն նորա վերայ հաստատուած շէնք, ուսերէնի ոչ մի դաս չպէտք է սկսուի, մինչև որ հայերէն լեզուով հարկաւոր նախապատրաստութիւնը չհոգացուի: Նայելով ուսերէն ընագրի յատկութեան, նախապատրաստութիւնը կարող է լինել կամ շատ ընդարձակ (այն ևս թերևս հայերէն լեզուի ուսուցչի օգնութեամբ), կամ հարեանցի:

Թէ „Сказка о царѣ Салтанѣ“ ինչպիսի նախապատրաստութիւն է պահանջում, ինքնին հասկանալի է: Մեր դպրոցներում ծրագրով ուսերէն լեզուն այսուհետև պէտք է սկսուի ուսման 3-րդ տարում, ուր որ աշակերտներին այդ հէքիաթի հայերէն Թարգմանութիւնը ոչինչ դժուարութիւն չպէտք է պատճառէ: Հետևապէս վարժապետը առանց այլևայլութեան հէքիաթի ամբողջ Թարգմանութիւնը կը կարգայ կամ կարդացնել կու տայ, պատմել կու տայ, եթէ հարկաւոր համարի, մի քանի բացատրութիւններ էլ կ'աւանդէ, և մի առ ժամանակ հայերէն դասի գործը վերջացած կը համարէ:

Այնուհետև կ'սկսուի ուսերէն լեզուի նախապատրաստութիւնը, դասը համարելով „сказка“-ի առաջին հատուածը կամ

1—14 տողերը.

Նախ պէտք է յիշեցնել և կարդացնել տալ այդ տողերի հայերէն Թարգմանութիւնը: Ապա կազմել այդ կրտսերի բառարանը.

Երեք—

աղջիկ—

երեկոյ—

. . . .

. . . .

. . . .

. . . .

արքայի կին—

. . . .

.
արար աշխարհ—
այն ժամանակ—
եւ այլն.

Ապա այս տախտակը լրացնել նաև այնպիսի բառերով, որոնք թարգմանութեան մէջ յակահնէ անուանէ չեն լսվում, իսկ ուսերէն բնագրի մէջ պատահում են. «Երեկոն օրուայ ուշ ժամանակ է»: «Արար աշխարհի ճաշը խնջոյք էլ կարող ենք կոչել»: «Խնջոյքը պէտք է պատրաստուի» և այլն, այսպէս առաջ բերել և միւս հարկաւոր բառերը, որով կը ստանանք բառարանի յաւելումը:

ուշ—поздно,
խնջոյք—пиръ,
պատրաստել—приготовить
և այլն:

Ուսուցիչը հայերէն բառերը գրում է մեծ տախտակի վերայ, իսկ ուսերէնը ասում է և ասեցնել է տախտակի, այն ևս քիչ քիչ զոր օր. չորս-չորս կամ հինգ-հինգ բառ ամէն մի անգամ: Այսպէս կը վերջանայ նախապատրաստութիւնը:

Այժմ կ'սկսուի բուն բնագրի ուսումը: «Мы должны выучить сказку о царѣ Салтанѣ наизусть». Վարժապետը արտայատիչ ձայնով արտասանում է և կրկնել է տախտակի բնագրի առաջին երկու տողը, իսկ աշակերտները կարդում են այն տողերի հայերէն թարգմանութիւնը: Արդէն առաջուց գիտենք, թէ ինչպէս պէտք է անգիր սովորեցնել տալ. նոյն կարգով աշակերտները պէտք է այս կտորը լաւ արտասանութեամբ, հարկաւոր շեշտերով և երևէջներով սովորեն, թէ ամբողջ խմբով և թէ հատ հատ:

Չպէտք է մոռանալ, որ դասի գլխաւոր ծանրութիւնը պէտք է կազմէ բանաւոր լեզուն, կենդանի խօսքը, և ոչ թէ գրքի գործածութիւնը, ինչպէս որ մինչև այսօր մեր ուսուցիչները վարել են իրանց գործը: Այս աստիճանում բանաւոր լեզուն անգիր անել տալով պէտք է սկսել. անգիր արածն էլ լաւ հասկանալի պէտք է լինի, ինչպէս որ մենք մեր նախապատրաստութիւններով արդէն բաւական իրազործում ենք: Ապա պղպչս սերտածները այնքան անգամ պէտք է կրկնուի նստարան-նստարան, ամբողջ խմբով, հատ-հատ աշակերտների կողմից, մինչև որ արտասանութիւնը ցանկանալի կերպով և անվերպ կատարուի: Սակայն կրկնութիւն-

ները ծանօթութեան չպէտք է հասցնել, այլ աշխուժով և հաճութեամբ պէտք է գլուխ դայ: Այս վախճանով ուսուցիչը ոչ թէ ուղղակի կրկնել կու տայ սովորածը, այլ կողմնակի, անուղիղ կերպով, որով աշակերտները առիթ կը ստանան իսկապէս նորից կրկնելու սերտածը, թէպէտ կը կարծեն, իբրև թէ դասը ուրիշ ուղղութիւն է բռնել:

Այդպիսի կողմնակի հասարակ հնարներից մէկն է տողերի և բառերի համարները: «Дѣти, изъ сказки мы выучили: Вспомы трехъ сестеръ; сосчитайте въ умѣ: сколько строкъ въ этой части?», նորա անշուշտ մտքում կը համարեն հայերէն լեզուով և կ'անեն տասնուչորս: Վարժապետը իսկոյն ուղղում է՝ «четыренадцать», և ակնարկում է. «сосчитайте со мною строки (ձեռին բռնած լուցկի կամ գրչակով)»:—Одна, двѣ, три, четыре, пять; (дальше повторите тотъ - же счетъ),—одна, двѣ, три, четыре, пять,—одна, двѣ, три, четыре; всего четырнадцать.

Ապա պատուիրել աշակերտներին, որ նոցա կէսը տող տող ստանաւորը բերան ասէ, իսկ միւս կէսը՝ համապատասխան թիւը.

«Три дѣвицы подѣ окномѣ»,—одна,
«Пряли поздно вечеркомѣ»,—двѣ,

и т. д.

Այնուհետև—համարել բառերը: Сосчитайте слова въ каждой строкѣ.

Три дѣвцы подѣ окномѣ—

одно, два, три, четыре.

Пряли поздно вечеркомѣ—

одно, два, три

и т. д.

Ինչպէս ասացինք, այս վարժութիւնը օժանդակ վարժութիւն է, և ուրեմն հէնց որ երևայ, թէ աշակերտները բաւական աշխուժանում են այդ բանից ապա դէպքից պէտք է օգուտ քաղել և ստանաւորը մի երկու անգամ ասեցնել տալ առաջուայ պէս լիովին, առանց ընդհատելու համարանքով: «Дѣти, повторите хоромъ наше стихотворение безъ счета; теперь въ одиночку...

Դարձեալ մի նոր վարժութիւն, մի և նոյն նպատակով. դերերի բաշխումը: Չորս աշակերտ դուրս են կոչվում. մէկը պիտի պատմէ հէքիաթի սկիզբը, միւսները պէտք է ասեն—քոյրերի խօսքերը: Այս—բանաւոր:

Արգ, գրութիւն. Напишите слѣдующія слова: „три“, пирь“, „наткала“, „богатыря“.

Но предварительно скажите всю строку, гдѣ встрѣчается слово „три“!—Три двѣицы подѣ окномѣ. Ну, теперь пишите „три“! (Աշակերտները հեգում են կամաց ձայնով—и, ри, три, և ապա թէ գրում են:)

А въ какой строкѣ встрѣчается слово „пирь“. —Приготовила я пирѣ. Напишите это слово! (Աշակերտները—и, ир, пирь, և ապա գրում են:)

„Наткала“.—Наткала я полотна (Աշակերտները —а, а, а;—а, на, գրում են—на: а, ка, тка: կշտին գրում են—тка; на-тка;—а, ла վերջապէս կցում են և ла,—на-тка-ла; наткала).

„Богатыря“.—Родила богатыря. (О, а, ы, я; о, бо և գրում են бо; а, га; գրում են га; бо-га; ы, ты; գրում են ты; бо-га-ты; я, ря; գրում են ря; бо-га-ты-ря)...

Այսքան ընդհատելուց յետոյ, դարձեալ կարելի է ամբողջ ստանաւորը կրկնել տալ. Повторите все стихотворение снова.

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Скажите со мною вмѣстѣ: «сестрица говоритъ, с. наткала, с. молвила, с. родила“. — А теперь скажемъ вмѣсто сестрицы—дѣвица, царица. Дѣвица говоритъ, дѣв. и т. д., царица говоритъ, цар“. и т. д.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ. Բնագիրը կարգալ տալ գրքով: (Կամաց ձայնով վանկ և բառեր կապել, իսկ բարձր ձայնով արտասանել արդիւնքը):

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ. Ընթերցողն արդէն գիտէ, թէ ինչ մեծ կշիռ ենք տալիս հատուածների անգիր անելուն, լսողական պատկերացումների հարստանալուն: Բայց ամենայն հոգեկան զօրութիւն չափ ու սահման ունի. մենք էլ պէտք է բանը ծայրայեղութեան չհասցնենք և մանկավարժական չափաւորութեամբ վարուինք: Աշակերտներից մէկը սերտաձը լաւ կը պահէ մտքումը, միւսը մոռացութեան կու տայ մի կտոր, երրորդը՝ մի ուրիշ կտոր, մի խօսքով շատերի մէջ զանազան պահանքներ և թերութիւններ կերևան: Այս բանը ոչ պէտք է յուսահատեցնէ ուսուցչին, և ոչ նորան այն սխալ ճանապարհի վերայ դնէ, որ նա սկսէ չարճարել մանկական դալար միտքը և այն բռնի խճողել: Նա իւր յոյսը պէտք է դնէ անուղղակի ներգործութեան վերայ:—Կանոնաւոր կերպով խմբով ասեցնելը, (որ կատարեալ երաժշտութիւն է դառնում) և մեր ծրագրած բոլոր վարժու-

թիւները— այդպիսի կողմնակի ներգործութիւններ են: Այդ դէպքերում մանուկը պահպանում է իւր աշխուժութիւնը, թարմութիւնը, յօժարութիւնը, որոնք մեր լաւագոյն դաշնակիցներ են հանդիսանում: Արդիւնքն այն է լինում, որ մանուկը ձեռք է բերում կարծես հարեանցօրէն, կարծես անգիտակցաբար, լեզուի նոր պաշար, լեզուի նոր հմտութիւն, որ մեր իսկական նպատակակէտն է, և ուրեմն շատ էլ չպէտք է ցաւենք, եթէ աշակերտներից ոմանք ոտանաւորը թերի են անգիր անում:—Մնում է և հետեւելը յիշեցնել. չլինի թէ աշակերտները պատուէր ստանան, որ նոքա տանը անգիր սովորեն: Առանին և առանց առաջնորդի սերտողութեան ժամանակ, և՛ շեշտն է ծովում, և՛ արտասանութիւնն է փչանում, և՛ բառերի լրութիւնն է տուժում. ուրեմն աշխատութիւնը ոչ միայն զուր է կորչում, այլ և վնասակար է դառնում: Ինչ որ սովորում է աշակերտը, այն պէտք է դասարանում սովորէ, ուսուցչի անմիջական ղեկավարութեան ներքոյ:

15—32 տողերը.

Ինչ որ նախընթաց մի մասի համար յայտնել ենք, նոքա շատ անգամ նշանակութիւն ունին նաև հետեւեալ մասերի համար, բայց մենք ի հարկէ այլ ևս չենք կրկնի միևնոյն բաները: Այսուհետև իւրաքանչիւր մասում միայն նոր բացատրութիւններ կու տանք, ուսուցչի հմտութեան թողնելով, որ ինքը առաջնորդուի նաև նախկին բացատրութիւններից: Մենք միայն էական բաները կը նշանակենք:

ԲԱՌԱՐԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ. տախտակի վերայ կը գրուի.

- Հէնց—
- սենեակ—
- դուռ—
- և այլն, մինչև
- ջուլհակ—ткачь,
- կին-ջուլհակ—ткачиха,
- խոհարար—поваръ,
- կին-խոհարար—повариха,

Եթէ աշակերտները չպնդեն, հարկ չկայ տախտակի վերայ գրել բարի, Թագուն բառերը, որովհետև դոքա ուսերէն ընագրում չեն պատահում: Իսկ այսպիսի բառեր, ինչպէս ВЫМОЛВИТЬ, թեպէտ չեն գրվում, որովհե-

տև արդէն նախկին մասում պատահել են, հետևապէս աշակերտներն էլ պէտք է հաստատեն, թէ այդ բառը անցեալից արդէն յայտնի է, բայց նորա յականէ յանուանէ պէտք է յիշեն և այն նախադասութիւնը, ուր որ անցեալ անգամ բառը պատահել է, այսինքն թէ „Третья молвила сестрица“ . Այս նկատողութիւնն էլ մի անգամ ընդ միշտ անում ենք, որպէս զի այլ ևս չկրկնենք, բայց ուսուցիչը թող լաւ միտ զնէ այդ բանին:

ԲՆԱԳՐԻ ՈՒՍՈՒՄԸ. Сегодня мы должны выучить продолжение стихотворения, а именно: Выборъ царицы, Իսկ թէ ինչպէս անգիր անել տալ, արդէն յայտնի է:

Սերտելուց յետոյ, երկու աշակերտներից մէկը մեր հատուածի սկիզբն է պատմում, միւսը թագաւորի խօսքերն է արտասանում: Ապա հինգ աշակերտներից մէկը պատմող է դառնում, երեքը քոյրերի դերերն են կատարում, հինգերորդը թագաւորի խօսքերն է ասում: Պատուէրը տալիս է ուսուցիչը. Продекламируйте: Бесѣда сестерь, կամ Скажите наизусть: Выборъ царицы.

Վերջապէս ամբողջ 2 մասն էլ անգիր կրկնել տալ բոլոր խմբով:

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆ. Նոյնը կարդալ տալ գրքով: Ապա և դերերը բաժանելով:

ՔԵՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՆԱԽԿԻՆ ԲԱՌԵՐԸ յԻՉԵՅՆԵՐՈՎ, Царь входит,—онъ входит; онъ стоялъ,—царь стоялъ; онъ говоритъ,—царь говорить; (յիշեցնել ճճիւցա գովորտը,—ոնա գովորտը).

Իրական սեռի նախկին բառերը յիշեցնելով, վերան աւելացնել. дверь закрипѣла, рѣчь полюбилася, она успѣла,—сестрица успѣла.

„Одна изъ васъ“; изъ кого именно?— „изъ сестрицы“, слѣдовательно: „одна изъ сестрицы“.

„Другая“, кто именно?—„другая изъ васъ“, „другая изъ сестрицы“. Այսպէս և յետոյ միշտ՝ օժանդակ բառերի տեղ՝ բուն յայտարարը զնել:

ԳՐՈՒԹԻՒՆ. „Дверь“, „царь“, „заборъ“, „дѣвица“, „красная дѣвица“, „исходъ“, „голубушка сестрица“, „голубушки сестрицы“, „за мной“, „будь“.

Միշտ պէտք է դասը աւարտել նախկին սերտած մասերը մի անգամ էլ լաւ կրկնել տալով, մասնաւանդ նորը:

33—49.

ԲՆԱՌԱՐԱՆ. զուրս ելաւ—
հայր—
պսակուել—և այլն:

Յետոյ լրացնել բացատրութիւնները, հետևաւ բառերը ստանալու համար.

- сѣни,
 - дворецъ,
 - недолго,
 - молодая
- и т. д.

ԲՆԱԳՐԻ ՈՒՍՈՒՄԸ ԸՆԹԵՐՅՄԱՄԲ. Мы прочтемъ и выучимъ наизусть: „Вѣнчаніе и зачатіе царицы“. Այս անգամ այս մասն սկսում ենք բնագիրը կարդացնել տալով, թէպէտ ուսուցիչը կարող է բնագրի այդպէս ուսուցումը յետաձգել, եթէ այս անգամ վաղ համարէ:

Կարդացնել պէտք է մինչև առաջին վերջակէտը, ուղղել արտասանութիւնը և ապա սովորական ձևով սերտել տալ, կանխաւ ի հարկէ հայերէն թարգմանութիւնը լսեցնելով:

Մենք գիտենք, թէ ինչպէս պէտք է կարդացնել տալ. բայց մի անգամ էլ ցոյց կու պանք օրգանական մեթոդով կարգալու օրինակը:

Աշակերտները կամաց արտասանում են առաջին բառի ձայնաւորները (ѣ, и), յետոյ դարձեալ կամաց կազմում են վանկերը (ѣ, сѣ, вѣ сѣ; и, ни; вѣ сѣ—ни). վերջապէս բախճր ձայնով вѣ сѣни. Կամաց (ы, е; ы, вы; е, ель, шель; вы-шель) բարձրաձայն—вышелъ; вѣ сѣни ель, шель. Կամաց (а, аръ; царь), բարձրաձայն—царь; вѣ сѣни вышелъ царь; կամաց (о, е; о, е, ецъ, тецъ; о-тецъ) բարձրաձայն—отецъ; вѣ сѣни вышелъ царь-отецъ.

Կամաց (ѣ; ѣ, сѣ, всѣ), բարձրաձայն—всѣ. Կամաց (у, и, и; у, пу; и, ти, сти; пу-сти; и, исъ, лисъ; пу-сти-лись), բարձրաձայն—пустились: всѣ пустились. Կամաց о, о, е; о, во), բարձրաձայն—во; о, во, дво; е, ецъ, рецъ; во дворецъ.

Ինքնին հասկանալի է, որ այն դէպքերում, ուր որ о տառը կարդացվում է а, վանկելիս էլ հէնց այդպէս պէտք է հնչել, ուրեմն отецъ, дворецъ բառերի մէջ ձայնաւորները պէտք է հնչել а, е, բայց գրել տալ о,

е.—Ում որ այդ բանը խորդ թուի, թող նա իւր սովորութեամբ վարուի, մինչև որ ժամանակով ըմբռնէ խաղութիւնը:

Եթէ գիրք կարդալը շատ դանդաղ առաջ գնայ, այնուհետև շարունակութիւնը կամ մնացած առղերը պէտք է սովորեցնել առանց գրքի միջնորդութեան, այսինքն լոկ լսողութեամբ, ինչպէս որ սկզբում կատարուեցաւ:

- Скажите наизусть;
- Беседа сестриць;
- Выборъ царицы;
- Вѣнчаніе и зачатіе царицы.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Царь вышелъ, онъ вышелъ. Царь соби́рался, онъ соби́рался. Царь обвѣнчался, онъ обвѣнчался. Царь сѣлъ, онъ сѣлъ. Гости положили, оставили; они положили, оставили. Всѣ пустились, они пустились. Повариха злится, она злится. Ткачиха плачетъ, она плачетъ. Повариха и ткачиха завидуютъ, онѣ завидуютъ. Царица понесла, она понесла.

ՔՐՈՒԹԻՒՆ. (o—a) „Отецъ“, „во дворецъ“, „соби́рался“, „обвѣнчался“, „молодой“, „потомъ“, „кровать“, „слоновой“, „положили“, „оставили“, „соднихъ“, „повариха“, „государевой“, „обещанье“, „выполняя“, „понесла“, „онѣ“.

(o—o) «Недолго», «тотъ», «честной», «гости», «кости», «ночи».

50—80.

ԲԱՌԱՐԱՆ, հարկաւոր լրացմամբ:
ԲՆԱԳՐԻ ՈՒՍՈՒՄԸ, եթէ հնարաւոր է գէթ մասամբ գրքի միջնորդութեամբ: Սերտողութիւն: Այս մասի վերնագիրն է. Коварный доносъ царю, կամ աւելի լրիւ. Ков. дан. царю о рожденіи ребенка.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Царь Салтанъ наказывалъ, онъ наказывалъ. Царь бьется, онъ бьется. Богъ далъ, Онъ далъ. Царь услышалъ, онъ услышалъ. Царь началъ, онъ началъ. Царь далъ, онъ далъ. Царица зорко сторожитъ, она зорко сторожитъ. Царица шлетъ, она шлетъ. Ткачиха, повариха и Бабариха хотятъ, онѣ хотятъ. Ткачиха, повариха и Бабариха шлютъ, онѣ шлютъ. Царица родила, она родила.

ВОЛНА; какъ выразить:—волна была или былъ? Припомните подобные примѣры.

„И царица надъ ребенкомъ какъ орлица“; въ чемъ царица выказываетъ себя какъ орлица?—она зорко сторожитъ ребенка, какъ орлица орленка.

ՔՐՈՒԹԻՒՆ. Началь чудесить, онъ чудесить. Хотеть повѣсить, онъ повѣсить. **ՅԻՂԵՅՆԵԼ** говорить („говорить одна дѣвица“) — она хотѣла говорить. **ՆՈՅՆԱԿԷՍ** приготовить—пригитовить;

- (онъ) молвить—молвить
- (онъ) входить—входить,
- (онъ) положить—положить
- (онъ) оставить—оставлять,
- (они, онѣ) стоять—стоять.—

- Продекламируйте: Бесѣда сестриць;
- Выборъ царицы;
- Вѣнчаніе и зачатіе царицы;
- Коварный доносъ царю.

81—106.

Այսուհետև բառարանն ու բնագրի սերտողութիւնը էլ չենք յիշատակիլ, որ արդէն ինքնին հասկանալի է: Բաւական է նոր մասի միայն համապատասխան վերնագիրը աւել. Попытка погубить царицу съ сыномъ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Пустая сума. Другая грамота Молодая царица. Царская воля. Злая доля. Хмѣльной гонецъ. Такой приказъ. Свои бояре.

„Царску волю“, այսինքն царскую волю. Красная дѣвица (припомните стихъ). Честные гости. Слоновая кость. Невѣдомая звѣрюшка. Законное рѣшеніе.

ՔՐՈՒԹԻՒՆ. (հոլով) Говорить онъ. Обобратъ его Въ суму его. Донесъ ему. Имъ далъ.

Шлетъ она. Извести ее. Прочитали ей. Ей наказывалъ. Пришли къ ней. Завидуютъ онѣ.

ՈՏԱՆԱԻՈՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՍԵՂՄ ՈՃՈՎ ՁԵԻԱՅՈՒՄԸ. Այս վարժութիւնը նախ պէտք է հայերէն փորձել ուրեմն այդ կը լինի խկապէս հայերէնի դաս, որով թէ ուսուերէնի, որով զգալի կերպով կիրազործուի այն սկզբունքը, թէ հայ մանուկի համար մայրենի լեզուն օտար լեզուի ուսումնասիրութեան հիմք պէտք է դառնայ:

Հայերէն դասի միայն սկզբնաւորութիւնը կ'ակնարկենք, շարունակութիւնը ինքնին հասկանալի հա-

մարերով: «Տղերք, կարդացէք հայերէն թարգմանութիւնը թէ սուրհանդակը ինչ սուտ լուր տարաւ թագաւորին:

«Թէ ծնուել է մի երեխայ,
Ոչ աղջիկ է, ոչ էլ տղայ,
Ոչ մկնիկ է, և ոչ էլ գորտ,
Այլ անասուն անյայտ ու խորթ »:

«Այդ բոլորը կարճ ասացէք»:—Ծնուել է ոչ աղջիկ և ոչ տղայ, այլ մի անասուն:

Այսպէս ձեռնդրել նաև թագաւորի բարկութիւնը և նորա պատուէրի կեղծելը:—Հիմի կարող ենք ուստերէն դասը շարունակել:

Дѣти, продекламируйте: доносъ гонца, царю!

„Родила царица въ ночь
Не то сына, не то дочь,
Не мышенка, не лягушку,
А невѣдому звѣрюшку“.

„Выразите все это сжато“.—Царица родила не сына, не дочь, а звѣрюшку. „А какъ подѣйствовало это извѣстіе на царя?“

Въ гнѣвѣ началъ онъ чудесить
И гонца хотѣлъ повѣсить;
Но, смягчившись на сей разъ,
Даль гонцу такой приказъ:
„Ждать царева возвращенья,
Для законнаго рѣшенья“.

«Сжато»!—Онъ сначала разгнѣвался, а потомъ далъ приказъ, ждаты его возвращенья.

Այսպէս շարունակել մինչև որ աշակերտները հետևեալ կերպով կարճ պատմեն ամբողջը. «Царю донесли, что царица родила не сына, не дочь, а звѣрюшку. Царь сначала разгнѣвался, а потомъ далъ приказъ, ждаты его возвращенья. Но приказъ подмѣнили. Бояре не подождали возвращенья царя, посадили царицу съ сыномъ въ бочку и бросили ихъ въ окіянь. (Ուսուցիչը թերևս չհաւանէ այս համառոտութիւնը, թող իւր կերպով ձևացնէ):

Հարկ չկայ յիշեցնել, թէ որպէս զի այս վարժութիւնը լաւ յաջողուի, պէտք է աշխատել, որ աշակերտը գործ անէ ընտրի բառերը, այսինքն օգտուի այն պաշարից, ինչ որ նա առ ժամն պատրաստի ունի: Թէպէտ նորա համառոտութիւնը շատ էլ կոկ չի ձևանայ, բայց փոյթ չէ: Մեր նպատակն է, որ նա ունեցածը գործ դնելու վարժուի, և ոչ թէ ոչնչից խարխափելով բաներ

ստեղծէ: Ուսուցիչը ամէն կերպ պէտք է աշխատէ, որ աշակերտին չվհասեցնէ, կարծեցնել տալով, իբրև թէ նորանից պահանջվում է մի անհնարին շարադրութիւն յօրինելու: Դա աւելի վստահութեամբ կը գործէ այն դէպքում, երբ որ զգայ և համոզուի, որ իրանից ուրիշ բան չի պահանջվում, քան նոր ստացած մտաւոր պաշարի գործածութիւնը, այսինքն ո՛րքայ այն բառերի գործածութիւնը, որ բնագրից նոր ձևեր է բերել:

107—138.

ՎԵՐՆԱԳԻՐ. Спасение матери съ младенцемъ. ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Небо, море, дитя, дно, окошко,—какое небо..? какое море..? Волна, вдовица, земля, душа, суша, бочка, ножка, головка,—какая волна..? какая вдовица..? Ребенокъ, берегъ, младенецъ, сынъ, дворъ,—какой ребенокъ..? какой берегъ..?

„Въ морѣ хлещутъ волны“. Гдѣ хлещутъ? «Въ морѣ».
«Въ море бросили бочку». Куда бросили? „Въ море“.

ԳՐՈՒԹԻՒՆ. Ասել տալ՝ «Въ синемъ небѣ звѣзды блещутъ». Լուծել տալ նախադասութիւնը, սկսելով «блещутъ» դիմաւոր բայից. բայց նախ գրել տալ այդ բառը: Что блещутъ? Պատասխան—„звѣзды блещутъ“. Գրել տալ միայն «звѣзды». Гдѣ блещутъ звѣзды?—«въ небѣ блещутъ звѣзды». Գրել տալ միայն «небѣ». Въ какомъ небѣ блещутъ звѣзды?—«Въ синемъ небѣ блещутъ звѣзды». Գրել տալ միայն «Въ синемъ».—

Բոլորը կրկնել տալ բանասիր կերպով: Հիմի միևնոյն եզանակով թող իրանք աշակերտները լուծեն և գրեն հետևեալ նախադասութիւնը. «Въ синемъ морѣ волны блещутъ».—

Մի ուրիշ վարժութիւն է—հետևեալ ՀԱՐՑՄՈՒՆԲՆԵՐԸ ԴՐԱԿԱՆ ԽՕՄԳԻ ԴԱՐՁՆԵԼԸ.

- 1) «Но изъ бочки кто ихъ вынетъ?»
- 2) «Богъ неужто ихъ покинетъ?»
- 3) «Какъ бы здѣсь на дворъ окошко намъ продѣлать?»

Հարկաւ նախ հայերէն լեզուի միջնորդութեամբ, ապա ուսանողներէն լեզուով գտնել տալ հետևեալ պատասխանները.

«Никто изъ бочки ихъ не вынетъ».
«Богъ, навѣрное, ихъ не покинетъ».
«Намъ надо постараться здѣсь на дворъ окошко продѣлать».

139—190.

ՎԵՐՆԱԳԻՐ. Избавление лебеди-царевны отъ коршуна-чародѣя.

Նախ հարեանցի կերպով օգուտ քաղել լաւ տոխթից և մի անգամ էլ յիշեցնել ԳԺԲ? և ԿՈՒԴԱ? հարցմունքների ճիշդ որոշումը, ի նկատի առնելով հետևեալ նախադասութիւնները. «Коршунъ въ морѣ кровь пролилъ» և «Коршунъ въ море тонетъ».

Իսկ առհասարակ աւելի զբաղեցնել հետևեալ վարժութեամբ, որ բաւական ժամանակ կը լսէ և մեծ աշխատութիւն կը պահանջէ, ուստի այս անգամ այլ ևս ուրեշ ոչ մի վարժութիւն չենք տալիս:

ԽՕՍՍԱԿՅԱԿԱՆ ՁԵՒՐ ՀԱՄԱՐԱԿ ՊԱՏՄԱԿԱՆԻ ԴԱՐՁՆԵԼ. (Անշուշտ նախ հայերէն ձևացնելով): Բնաբանն է հետևեալ 16 տողը.

«Ты, царевичъ, мой спаситель...
մինչև

Не горюй и спать ложись».

Գորա հասարակ պատմականը այսպէս կը ձևանայ. «Лебедь русскимъ языкомъ сказала царевичу, что пусть онъ не тужить, если его стрѣла пропала даромъ въ морѣ; что это горе—не большое горе, что она отплатить ему добромъ и сослужить въ будущемъ. Далѣе—что онъ вѣдь не лебедь избавилъ, а дѣвицу оживилъ, что онъ не коршуна убилъ, а чародѣя. Она его еще разъ увѣրила, что она ввѣкъ его не забудетъ и что, при желаніи, онъ всюду ее найдетъ. Наконецъ она попросила его воротиться (къ матери), не горевать и спать ложиться».

Ի հարկէ այս բոլորը պէտք է մաս-մաս ձևակերպել, ամէն մի մասը անապթաք կրկնել, նախընթաց մասերի հետ միացած, մինչև որ ամբողջութիւնը ըստ հնարաւորութեան անթերի լրանայ:

191—202.

ՎԵՐՆԱԳԻՐ. Провозглашеніе царевича въ сказочномъ городѣ княземъ Гвидономъ.—

ԱՐՁԱՆԱՅՈՒՄԸ կամ ԳՐԻ ԱՌՆԵԼԸ. Մեղանում արտագրութիւնն ու թելագրութիւնը խիստ սիրուած վարժութիւններ են, բայց միշտ էլ անփութութեամբ ևս կատարվում և սպարդիւն անցնում: Այդ անյաջողութեան պատճառն այն է, որ ոչ ոք չի ուզում հաւատալ, թէ զրի առնելն էլ մի ջոկ վարժութիւն է և եթէ կարելի է ասել՝ բուն մայր է արտագրութեան և թելագրութեան: Մերոնք կարծում են, թէ զրի առնելը ինքնին գլուխ կու գաջ, եթէ շատ թելագրել և արտադրել տան. մինչդեռ այդ գործը միայն միշտ միևնույն սխալներ գրելու հաստատութիւն է տալիս զրոյ մատներին: Ոչ, զրի առնելը ջոկ և խիստ էարեոր վարժութիւն է:

Գրի առնելը անյայտ բան չէ, բայց ճանաչուած չէ որպէս ինքնուրոյն և արժանի ուշադրութեան գործ: Աշակերտը պէտք է այն գիտակցութեան հասնի, թէ զրի առնելը մի արուեստ է, որը նա պէտք է ժամանակին ձեռք բերէ: Երբ նա «улетѣла» բառը փորձում է գրել, առանց իրան հաշիւ տալու ձայնաւորների գրութեան մասին (արդեօք e, ъ, թէ э գրով), այդ ապացոյց է, որ ինքը տակաւին թափուր է այն դազափարից, թէ մի հնչիւն կարող է տարբեր գրութիւններ ունենալ: Իսկ եթէ նա, գրելուց առաջ, ձգտէ տեղեկանալ, թէ բառի ամեն մի ձայնաւորը ո՞ր նշանագրով պէտք է գրուի, և այդպէս սխալ գրելու փորձանքից զերծ մնայ, նա կ'ապացուցանէ, թէ արդէն մօտենում է զրի առնելու հմտութեան:

Բայց աշակերտը կարող է անուշմութեամբ, տեղի անտեղի, անդադար հարցմունքներ տալ ուսուցչին, թէ ի՞նչպէս գրուի նաև այն հնչմունքը, որ տարակուսի առաքկայ չի կարող լինել և չպէտք է լինի, որովհետև որ միայն մի նշանագիր ունի թղթի վերայ արտայայտուելու համար: Մթթէ կարիք կայ հարցնելու գործը. թէ ի՞նչ տառով պէտք է գրուի «ОНЪ», «НОЧЬ» բառերի ձայնաւորը: Այդպէս հարցնողը կ'ապացուցանէ, թէ գործի ժամանակ չի մտածում, յախուռն օգնութիւններ է պահանջում: Ուրեմն նա պէտք է ընտելանայ և այն բանին, որ համարձակ զրէ, առանց ուսուցչի օգնութեան զիմելու, այն դէպքում, ուր որ

գրութեան տարակոյններ չկան: Այլ է միւս դէպքը, որ որ վանկի մէջ տարակուսական «а» է հնչվում. գոր. օր. «скорѣй», «ограда», «золотой» և այլն, ուր որ աշակերտը պէտք է տեղեկանայ և մտքում պահէ, թէ արդեօք այդ «а» հնչուածը պէտք է «а» թէ «о» գրուի:

Հայ մանուկի ականջի համար ուսուերէն բաղաձայնները խիստ որոշ են, և ուրեմն նա կարող է գրեթէ միշտ անսխալ ըմբռնել բաղաձայն հնչմունքը և գրել, առանց ուսուցչի օգնութեան գիմելու: Եւ սորա պատճառն այն է, որ հայերէն Յ լծորդները համեմատութեամբ (բ, պ, փ) ուսուերէնը միայն երկու հատ ունի (б, п):—Ուրեմն տարակուսելի դէպքերը այնքան էլ շատ չեն, և մանուկը պէտք է միայն այդպիսի դէպքերը ի նկատի ունենայ:

Մենք էլ այժմ կը խմբենք մեր հատուածի միայն տարակուսելիները, որոնցից աւելի բարդ և զժուարները կը թողնենք ուրիշ անգամին: Աշակերտները ուսուցչից պէտք է սովորեն, իւրաքանչիւր բառի առթով, թէ որ հնչիւնը ինչ տառով պէտք է գրուի և թէ մանաւանդ երբ չկայ ոչ մի տարակուսելու բան, ուրեմն և հարցնելու էլ կարիք չպէտք է լինի:

«Улетѣтъ», «цѣлый», «рѣшиться», «грезы», «стѣна», «всѣ»;

«Лебедь», «мать», «лишь», «дивясьсь»;

«Колымага», «пышный»;

«Натошакъ», «открыть», «отрясая», «передъ собой», «монастырь», «моя».

Մի քանի օրինակ էլ, ուր որ ոչինչ տարակուսելու բան չկայ, և աշակերտը պէտք է վարժուի այդպիսիները գրել ինքնուրոյնաբար, առանց օգնութեան. «такъ», «вотъ», «очи», «ночи», «городъ», «онъ», «будить», «будеть», «градъ», «сталь», «княжить».—

Ընթերցողը մեզ այնպէս չպէտք է հասկանայ, իրբև թէ մեր բացատրութիւնները նոյն ընդարձակութեամբ և ճիշտ այն մասում, ուր որ նոքա յիշատակուած են, պէտք է անթերի և լրիւ կատարուին: Ընդհակառակ ուսուցիչը ինքը պէտք է կռօտ տեղն ու չափը: Զոր օր. վերը առաջ բերած օրինակները նա կարող է չափազանց և շատ համարել: Ուրեմն նա պէտք է առ ժամ միայն մի մասը գործ դնէ: Եւ ոչ այսքան միայն, այլ ինչ որ մենք մի հատուածում ենք յիշատակում, նա կարող է և պէտք է աշակերտներին զբաղեցնէ մի և

նոյն վարժութիւններով նաև այլ հատուածներ ուսումնասիրելիս: Մանաւանդ, որ մենք մի անգամ ասածը միւս դէպքերում էլ չենք կրկնում, թէպէտ առիթներ շատ կան մի և նոյնը օգտով գործադրելու համար: Առ հասարակ ուսուցիչը մեծ ազատութեամբ պէտք է գործէ, որպէս զի մեր ցուցած գաղափարը և ոգին իբրագործէ և ոչ թէ հատուածների բառացի ստրուկ դառնայ:

203—233.

ՎԵՐՆԱԳԻՐ. Приѣздъ корабельщиковъ въ гости къ князю Гвидону.

Աշակերտներն արդեն գիտեն հարցմունքը դրականի դարձնել, խօսակցականը պատմականի վերածել, ընդարձակը համառօտել: Արդ այս ամբողջ հատուածը պէտք է սեղմ ոճով ձևացնել, բայց ի հարկէ նախ հայերէն դասի նիւն դարձնելով:

ՍԵՂՄ ՈՃ. Близъ острова князя Гвидона показывается корабль. На кораблѣ люди толпятся и удивляются: они помнили, что прежде этотъ крутой островъ былъ необитаемъ, неприволенъ, а теперь стоитъ тамъ чудесный городъ. Оттуда ихъ пригласають пушками. Они пристають къ городу. Князь Гвидонъ ихъ угощаетъ и спрашиваетъ, чѣмъ они торгуютъ и куда плывутъ? Они же отвѣчаютъ, что объѣхали весь свѣтъ, торгуя соболями и лисами, и что возвращаются въ царство Салтана. Князь пожелалъ имъ добраго пути и приказалъ передать поклонъ царю Салтану.

234—260.

ՎԵՐՆԱԳԻՐ. Тоска князя Гвидона по отцу и полеть его комаромъ.

Շարունակել ԳՐԻ ԱՌՆԵԼՈՒ վարժութիւնը, նիւթը այս հատուածից ընտրելով:

261—230.

Այս հատուածը նախ հայերէն դասի նիւթ դարձնելով. «Սալթան թագաւորի» հէքիաթը, հայերէն թարգմանութեամբ, այնքան գիւրքմբռնելի է Յ-դ տարուայ աշակերտների համար, որ մենք հարկ չհամարեցինք,

ամբողջ թարգմանութիւնը պատմել տալուց յետոյ, իւրաքանչիւր հատուածն էլ, դասերի սկզբից, առանձնակի կարգացնել կամ պատմել տալ: Բայց ի հարկէ ժամանակ ժամանակ պէտք է այդպէս անել, մանաւանդ երբ որ բովանդակութիւնը փոքր ինչ աւելի խոր մշտածելու և անդրադառնալու առիթ է տալիս, ինչպէս որ առաջիկայ հատուածից տեսնում ենք:—

Այս հատուածի թարգմանութիւնը կարդացնել տալուց յետոյ՝ աշակերաններից բացատրութիւն պահանջել:

- 1) Ինչո՞ւ—Սալթան թագաւորը տխուր, մռայլ էր.
- 2) Ինչո՞ւ—կանայք նորա աչք-ունքին են նայում.
- 3) Ինչո՞ւ—կանայք ուզում են նորան խելքից հանել.
- 4) Ինչո՞ւ— մոծակը զայրանում և խայթում է:—

ՎԵՐՆԱԳԻՐ. Комарь видит отца, Салтана, и узнает о существовании чудной бѣлки.

ԳՐԻ ԱՌՆԵԼՈՒ ՎԱՐԺՈՒԹԻՒՆԸ ՀԱՐՈՆԱԿԷԼ:

331—378.

ՎԵՐՆԱԳԻՐ. У князя Гвидона заводится чудная бѣлка.

(Աշակերանները պէտք է ըմբռնեն, որ Գվիդոնը հրաշալի սկիւռ է ուզում ունենալ ոչ միայն իւր անձնական փափագը կատարելու, այլ և հօր գալուստը արագացնելու համար):

Այս և հետեւալ մի քանի հատուածների համար առանձին վարժութիւններ չենք նշանակի, այն խորհրդով, որ նախընթաց վարժութիւններից մի քանիսները դարձեալ կրկնելու առիթ ունենանք, ի հարկէ ընտրութիւնը թողնելով ուսուցչի բարեհայեցողութեան:

379—418, 419—516, 517—576.

ՎԵՐՆԱԳԻՐՆԵՐ. 1) Полетъ князя Гвидона мухой.

2) Муха видитъ отца, Салтана, и узнаетъ о существовании морскихъ витязей.

3) Наказъ морскимъ витязамъ охранять Гвидоновъ удѣль.

577—618.

ՎԵՐՆԱԳԻՐ. Полетъ князя Гвидона шмелемъ.

ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆ. Այս վարժութեան գլխաւոր նպատակն է ողորդարձիւնը աւելի հաստատել: Կարելի է ամբողջ հատուածներ արտագրել տալ, բնաւ օգուտ չըտալով: Եթէ աշակերտը միայն սև տառեր է արտագրում, և ոչ թէ լաւ ուսումնասիրած բառի ամբողջութիւն, նախադասութեան ամբողջութիւն, նա կատարած կը լինի լոկ մեքենական գործողութիւն և միայն ժամավաճառութիւն: Օգտաւէտ արտագրութիւնը այն կը լինի, եթէ նորա հետ կրկնուի գրի անելու գործողութիւնը, միայն այն տարբերութեամբ, որ արտագրութեան ժամանակ ուսուցչի տեղը բռնէ բաց առած գիրքը:

Արտագրութեան գործը այսպէս է կատարվում: Աշակերտը գրքից մտադրութեամբ կարգում է մի ամբողջ նախադասութիւն, գոր օր. Вѣтеръ по морю гуляетъ— և կիստմայն կրկնում է նոյնը՝ այլ ևս գրքին չնայելով, բայց բառերը անշատելով (вѣтеръ—по морю—гуляетъ): Այս կարգով իւրաքանչիւր բառը մի անգամ էլ կամացուկ կարգում է, յօդ.յօդ բաժանած, և գրքով ուսումնասիրում է բառի գրութիւնը (Вѣтеръ; заглавная буква; ъ, е; твердый знак), այնուհետև գրում է բառը և գրածը համեմատում է գրքի հետ, որպէս զի սխալ առած չըլինի: Ուրեմն նա ոչ միայն ընդօրինակեց, այլ նաև կանխաւ դիտեց, բան սովորեց, ուսումնասիրեց:

Կամացուկ կարգում է և ուսումնասիրում է երկրորդ բառի գրութիւնը (по морю; раздѣльно; ուրիշ ոչինչ նկատելու բան չկայ), գրում է և գրածը ստուգում է գրքով:

Այդպէս և երրորդ բառը (гу-ля-етъ), նկատում է միայն (е և твердый знак), գրում և ստուգում է: Երկրորդ նախադասութիւն.

И корабликъ подгоняетъ. Աշակերտը նոյնութեամբ գրում է և այս նախադասութիւնը, բայց առանձին նկատելու հանգամանքներ շատ չունի. գլխաւորն այն է, որ 3 անգամ «а» հնչածը պէտք է նկատէ, որ «о» է գրվում

ко... под... го... (ка—пад—га)

Ի դուր է յուսալ, թէ աշակերտը այսչափ մտադրութեամբ գործ կը կատարէ, եթէ ուսուցիչը սեղանէ սեղան չպտտէ և բոլոր աշակերանների գործողութիւնների

ՎԵՐՉԱԲԱՆ

Մեր մաադրութիւնն էր „Сказка о царѣ салтанѣ“, բանաստեղծութիւնից յետոյ, միւս յօդուածներէ համար էլ յատուկ վարժութիւններ և բացատրութիւններ տալ: Բայց այդ միաքը փոխեցինք, երկիւղ կրելով, թէ մի գուցէ, այսպիսի նոր գործի մէջ՝ նոր-նոր վարժութիւնները աւելի դժուարացնեն մեր ուսուցիչներին, որոնք մինչև այսօր ուրիշ շաւղով գնալու սովորութիւն են ունեցել: Հետևապէս թողնում ենք, որ ուսուցիչները իրանք մշակեն միւս յօդուածները, իրանց անհատական թելադրութեանց համեմատ: Մենք ուրախ կը լինինք, եթէ նոքա գէթ չարտնջեն, որ մենք մեր ցուցած վարժութիւններով նոցա աւելի աշխատել ենք տալիս, քան սովորութիւն է մեր հին կարգերով, բայց դորա նպատակն այն է, որ աշակերտները աւելի արդիւնք արտադրեն, քան տեսնում ենք:

Սկզբներում մենք յայտնել էինք, թէ ուսուցիչը կարող է գրագիտութիւնն ուսուցանել, ինչ մեթոդով էլ որ ուզենայ, մի և նոյն ժամանակ համառօտակի ցոյց տալով օրգանական մեթոդի կատարելութիւնը: Բայց մի քանի զրգուար դէպքեր կան, այն տեղ ինչպէս վարուի

ուսուցիչը: Դարձեալ կը պատասխանենք,—ինչպէս որ կամենայ, միայն թէ ի գուր չշփոթուի:

Սակայն որպէս զի ոչ մի տարակոյս չթողնենք, մենք այս տեղ մեր կերպով կը լուծենք և այն դժուարութիւնները: Չոր օր. աշակերտը ինչպէս վերլուծէ բանաւոր կերպով сѣла, сѣла, обѣхали բառերը: Եթէ տարակուսական հնչիւրները հայերէն տառերով նշանակենք, նա պէտք է այսպէս վերլուծէ արտասանած բառը.

сѣла—է, а; է, сէ; а, ла; (сէ-ла); сѣла.

сѣла—իէ, а; իէ, сիէ; а, ла (сիէ-ла); сѣла.

обѣхали—ա, իէ, а, и; ա, ած; իէ (ած:իէ); а, ха (ած-իէ-ха); и, ли (ած-իէ-ха-ли); обѣхали.

Այս օրինակները ցոյց են տալիս, թէ ինչպէս պէտք է կատարուի բանաւոր վերլուծութիւնը: Մենք արդէն գիտենք, որ գրութիւնն ուրն թերցանութիւնը այլ կերպի գործեր են: Սակայն կարծում ենք, որ ուսուցիչն այժմ արդէն պարզ ըմբռնում է, թէ նոյն բառերը՝ գրութեան և ընթերցանութեան ժամանակ՝ ինչպէս պէտք է վանկ-վանկ համադրուին. մանաւանդ նա չի մոռանայ միշտ աշակերտներին տեսցնել տալ (ցածր ձայնով) բոլոր տարակուսական տառերը, այսինքն ճիշտ որոշել տալով, թէ որ տեղ պէտք է գրուի е, э կամ ъ, որ տեղ твердый знак և որ տեղ о գիրը արտասանուի կամ а արտասանածը о գրուի և այլն, ի հարկէ հետգէհետէ նուազեցնելով տարակուսականների այսպէս մշտական յիշատակութիւնը:

Այս գրքոյկը յօրինուել է 3-դ տարուայ ուսման համար, ուր որ ուսներէն այբուբենն է սկսվում: Բայց նա կարող է և այլ գործածութիւններ ուենալ: Նա զոր օր. առաջժամ կարող է ամենայն յարմարութեամբ գործածուիլ նաև 4-դ տարուայ բաժանմունքում (կամ թեմակ. դպրոցների առաջին դասարանում), ուր որ աշակերտները արդէն զրազիտութեան ծանօթութիւն ունին հին դասագրքերից, բայց տակաւին մեր շաւղով չեն ընթացել լեզուի ուսմամբ:

Ոչ նուազ յանձնարարելի ենք համարում սոյն գրքոյկը նաև այն մայրերին, որոնց տան մէջ հայերէնը մինչ այսօր արհամարուած է եղել, իսկ այժմ նոքա տարակուսած՝ չեն իմանում: Թէ ինչպէս ուղղեն տան մէջ արմատացած սխալը: Ահա նոցա համար մի գեղեցիկ առիթ, որ նոքա կարողանան իրանց գաւակներին՝ լաւ ուսերէնի հետ՝ նաև լաւ հայերէնը մատակարարել և այն քիչ-քիչ ընտանի կացուցանել:

Կան գաւառներ, ուր որ հայերը հարազատ մայրենի լեզու չունին (Վրաստանի, Խրիմի, Ուտիացիների կողմերում), աղաւաղ օտար լեզու են գործածել և միշտ գանգատուել են, թէ համապատասխան դասագիրք չեն ունեցել: Մեզ այնպէս է թուում, որ սոյն գրքոյկը թերևս կարողանայ այդպիսիներին մի փոքր ծառայութիւն մատուցանել: Բայց ի հարկէ փորձը պէտք է հաստատէ այս ենթադրութիւնը:

Վերջապէս մեթոդիկայի սիրահար երիտասարդ ուսուցիչները այս գրքուկի մէջ կը գտնեն բաւական գործնական ցուցումներ:

Մեր նպատակն է քանդել մանկավարժական կանխամուտ վատ սովորութիւնները, փտած բուսիւնան: Միթէ մեր արդոյ ուսուցիչները չեն ուզենայ սթափուիլ և հին առաջնորդութիւնների գերութիւնից ազատուիլ: Ժամանակ է քիչ-քիչ ընտելանալ այն արուեստին, որով ուսումնարանական տաղաուկ և դառն կեանքը հոգեկան ժիր գործունէութեամբ մասամբ իւրիք ամօքվում և քաղցրանում է. ժամանակ է վերջապէս մանուկի ուշք ու միտքը արթնացնել, բաց անել, և ոչ թէ նորան «համը մեթոդներով» միշտ միայն թութակի դեր կատարելու դատապարտել:

Ս. Մ.



ОГЛАВЛЕНИЕ

АЗБУЧНЫЙ МАТЕРИАЛЪ:

Заучиваніе наизусть.—Письмо и чтение.—Группа словъ на ѓ и њ.—Буква „о“ въ письмѣ и произношеніи. Стр. 23--28.

ХРЕСТОМАТІЯ:

Сказка о царѣ Салтанѣ „ 39.
Сказка о рыбацкѣ и рыбкѣ „ 107.
Комаръ „ 125.
Муха „ 127.
Бѣлка „ 131.
Лебедь „ —
Утопленникъ „ 135.
Колыбельная пѣснь „ 139.
Ласточка „ 143.
„Колоколъ стонетъ“ „ 145.
Примѣры переводовъ „ 147.


ՑԱՆԿ


ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՎԱՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

Օրգանական մեթոդ § 3. Եր. 30.
Մայրենի լեզուով նախադասարանու-
թիւնն այբուբենի բաժնում § 4. „ 31.
Անգիրը անել տալը. բանաւոր վարժու-
թիւն § 4. „ 32.
Գրաւոր վարժութիւն § 5. „ 33.
Ընթերցանութեան վարժութիւն § 6. „ 34.

ՀԱՏՈՒԱԾՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՆԻ- ՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՀԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ.

Անուղղակի ներգործութիւն՝ թուարկու-
թիւնը և Դերերի բաշխումը (բա-
ցարութիւններ 1—14 տող.) „ 153.
Օժանդակ բառերի փոխարէն բուն յայ-
տարարները (15—32) „ 156.
Օրգանակ. մեթոդով կարգաչնելը (33—49) „ 157.
Զօրութեամբ իմացուածի բացորոշ ար-
տայայտութիւնը (50—80) „ 159.
Սեղմ ոճ (81—106) „ 159.
Նախադասութեան քերականական լու-
ծումն և Հարցական խօսքից դրա-
կան ասութիւնը (107—138) „ 161.
Ստակցական ձևից պատմական ասու-
թիւնը (139—190) „ 162.
Արձանագրումն կամ զբի անելը (запись)
(191—202) „ 163.
Արտագրութիւն (577—618) „ 167.
Թեղազրութիւն (619—712) „ 168.
Հէքիաթի քարտեզը „ —







Ս. ՄԱՆԳԻՆԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է՝

ԴՍՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

(գերմ. թարգմ.) 30 Կ.
ԱՆԺԱՄԱՆԱԿ ԹՍՏՐՈՆ ԵՒ ԸՆԹԵՐՑԱՆՈՒ-
ԹԻՒՆ (նոյնպ.) 20 Կ.

ՊԱՏՐԱՍ Է ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՄՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ».

ԳԻՆՆ Է 55 ԿՈՊԷԿ

Շուտով կը հրատարակուի սոյն Хрестоматія-ի
չարունակութիւնը ծիսական ուսումնարաններէ 4-րդ,
5-րդ և 6-րդ բաժանմունքներէ համար ևս:

Հայաստանի Ազգային գրադարան



NL0432536

